Հ. Յ. Դ.
ՄԱՄԼՈՅ ԴԻՒԱՆ

# ԴՐՕՇԱԿ

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

1904

№ 9 (150) XIV ՏԱՐԻ ՍԵՊՏԵՄԲԵՐ 1904

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

# ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

## ԿՌԻՒԻ ՏԵՆԴԸ

Եւ թող լռեն չարաշուք ձայները։ Թող Հայաստանի լեռներից հնչող անընդհատ որոտը լռեցնէ նրանց, որոնք տրամադիր են բացասել հայի մէջ ռազմական կորովը և դատապարտել նրան յաւէտ ստրկութեան։

Թող ոչ ոք այլեւս, ոչ մի յոռետես, ոչ մի հայատեաց, ոչ մի ազգադաւ չ'օրօրէ իրեն պատիր յոյսերով՝ թէ մի օր կարող է ցամաքած տեսնել այն ճակատագրական, տարերային հոսանքը, որի անունն է հայկական շարժում։

Այս տենդային ու ահեղ շրջանը, հերոսների այս սքանչելի բոյլքը, դիւցազնական — և որքա՜ն անհաւասար — ճակատամարտների այս անհատնում շարքը, որ գալիս է մի երկարատև ու զարհուրելի ճգնաժամից յետոյ, բայց մանաւանդ այս չնաշխարհիկ անձնուրացութիւնը ամենասարսափելի արկածների առաջ, մահի, վտանգի այս արհամարհումը, որ բնորոշ է հայոց կեանքի նորագոյն շրջանի համար, — ի՞նչ է վկայում այս բոլորը, եթէ ոչ հայ շարժման անսովոր կենսունակութիւնը, եթէ ոչ նրա անխախտ յարատևումը…

Ի՞նչ են արգելքները — թէկուզ և նիւթւած Եւրոպայի միահաբոյր ապարանքներում — մի կոյս, անհրկիւղ բանակի համար, որը ինքզինքը ընծայել է մահուան…

Եւ ահա այդ շարժումն ու անխոնջ բանակը, որ մի չնչին մեծութիւն է հարիւր հազարաւոր թշնամու զօրքի ու թնդանօթների դիմաց, — ահա նա անդադար, գրեթէ միաժամանակ լոյս է ընկնում հայրենիքի զանազան ծայրերում, կոտորում է և կոտորւում, անգնահատելի զոհեր է տալիս, բայց և գրեթէ միշտ ճողոպրում է փոթորիկներից, ապաւինում է անյայտ դարանները, լցնում է իր նօսրացած շարքերը, նորից դահավիժում թշնամու վրայ, նորից հարւածում…

Սասունը մենակ չմնաց իր ցնցումներով, մենակ, արիւնլուայ և անարձագանք, ինչպէս 1894-ի սև թւականին։ Հայ դիմադրութիւնը՝ բարբարոսաբար ճնշուած բարձր լեռներում՝ շարունակւեց պարտիզանական կռիւների ձևով դաշտերի վրայ, և հեռագիրները անընդհատ ծանուցեցին եւրոպական մամուլին արիւնահեղ ճակատամարտներ փէդայիների ու զօրքերի միջև՝ մերթ Էրզրումի, մերթ Բիթլիսի ու Վանի վիլայէթում։ Մայիսի սկզբներին Ա շ ո տ - Ե ր կ ա թ ն էր իր խմբով ընդհարւում քրդերի հետ Արճէշի մօտ, Խօջալլուի ձորակում. ռումբերի տարափից սարսափահար փախչում է թշնամին, թողնելով 50-ից աւելի դիակներ։ Յունիսի մէջ Ս ա յ ծ ա կ ի ձիաւոր խումբն է կռւում Զիլինի աւերակներում 4,000-ից աւելի զօրքերի ու քրդերի դէմ մի կատաղի կռիւ, որ խլում է հայերից 25 քաջեր, իսկ թշնամու շարքերից մի քանի հարիւրներ։

Յուլիս ամսի մէջ „Դաշնակցութեան“ արշաւախմբերը, թւով 102 հոգի, գրաւում են Ջօրի ու Մօսունի զօրանոցները և ռումբերով ու գնդակներով սոսկալի ջարդ են տալիս տաճիկ պահակներին։ Ոտքի է կանգնում ամբողջ Ալաշկերտի թիւրք ու քիւրդ խուժանը. հայ ապստամբները դիմագրաւում են նրանց և զօրքերին, կոտորում են 400 հոգի, իրենցից զոհ տալով 27 մարդ միայն։

Գրեթէ միաժամանակ մի ուրիշ արշաւախումբ, 61 հոգուց բաղկացած, Ո ր ս ո ր դ ի ու Թ ո ր գ ո մ ի առաջնորդութեամբ, կռւի է բռնւում տաճիկ զօրքերի հետ Օլթիի շրջանում, ոչ հեռու ռուսական սահմանագլխից, և այդտեղ… խաղացւում է մէկը այն զարհուրելի ողբերգութիւններից, որոնցով ռուսական անհոգի վայրենութիւնը պիտի յաւերժանայ համաշխարհային պատմութեան մէջ, — ռուս սահմանապահ զօրքը օգնութեան է հասնում նեղն ընկած տաճիկներին, կոտորում է հայ ապստամբներին, չնայած սրանց ձեռնպահութեան ու կրկնակի յորդորներին, ապա մերկացնում է, ջարդում, այլանդակում նահատակներին և թիւրքերի հետ դըրկախառնուած՝ օրգիաներ է սարքում դիակների շուրջը…

Երբէք, երբէք հայը չի մոռանայ Լանկթամուրական այդ սարսռեցուցիչ գազանութիւնները, երբէք նրա անարգւած, արիւնոտուած սիրտը այսքան դարշանք, այսքան խոր ատելութիւն չէր զգացել դէպի „քրիստոնեայ“ համիդականները, որոնք իրենց հրէշութիւններով մահմէտական դահիճներին անգամ գերազանցեցին…

Փո՜յթ չէ. նոյնիսկ այդ ճիւաղային արարքները „քրիստոնեայ հովանաւոր“ պետութեան կողմից, նոյնիսկ ե ր կ ո ւ ֆ ր օ ն տ ի վ ր ա յ կռւելու անողոք անհրաժեշտութիւնը չի սարսափեցնում հայ յեղափոխականին. պատմութեան անսիրտ տրամաբանութիւնը դրել է նրան երկու կրակի մէջ, շա՜տ կրակների մէջ, և նա անխռով հնազանդութեամբ տանում է իր բաժին լուծը…

Զարմանալի շրջան ենք ապրում վերջին երեք ամիսների ընթացքում ալէկոծումը և ռ ա զ մ ա կ ա ն տ ե ն դ ը հասնում են չտեսնւած սահմանների. հայկական բարձրա-

ւանդակը երբէք, թերևս, վկայ չէ եղել այսքան սրտապնդող տեսարանների, այսքան արագութեամբ իրարու յաջորդող՝ բուռն, հերոսական ընդհարումների:

Բասենի, Սասունի, Օլթիի, Բագրևանդի կռիւներից յետոյ՝ ահա Բիթլիզի վիլայէթն է ասպարէզ դառնում արշաւախմբերի գործունէութեան: Անդրանիկը, միշտ անհանգիստ, միշտ կռուի ծարաւ՝ իր մի բուռը կտրիճների հետ նետւում է շարունակ այս ու այն վաշտի, զօրանոցի վրայ, մի օր նա յայտնւում է գաւառի մէջ, միւս օր ուղղակի բազմամարդ քաղաքի կենտրոնում — ի՛նչ փոյթ, թէ քաջի գլուխը գնահատուած է արդէն — շանթի պէս զարնում է և անհետանում, թողնելով թըշնամուն շշմած ու ահաբեկուած:

Ահա Խանասորի Դումանն է երևան գալիս Վասպուրականում իր ընտիր հեծելախմբով, կռւի է բռնւում մեծաքանակ քրդերի հետ և մի անգամ ևս յաղթանակով դուրս է գալիս այն ծանօթ վայրերից, ուր նա շատ անգամ նեղն է ձգել արիւնարբու աշիրէթներին:

Ահա վերջապէս հայ յեղափոխականները բանակ դրած Վասպուրականի մայրաքաղաքում... Սարսափելի անակնկալ: Յարձակման տպաւորութիւնը այնքան ուժեղ է, որ հեռագրական գործակալութիւնները, չափազանցնելով, ծանուցանում են, թէ Անդրանիկը գրաւել է Վանը: Տիրում է անհնարին սարսափ, հիւպատոսները շտապում են այնտեղ, իշխանութիւնները իրարանցման մէջ են, „զօրքերը գնում են ազատելու քաղաքը“:

Ահա արդէն մի շաբաթ է ինչ կռւում են շարունակ, և բազմաթիւ զօրքերը դեռ չեն կարողացել տիրել ապըստամբներին:

Բարրիկադներ Վանո՛ւմ... Հայութեան բազմամարդ այդ կենտրոնը, ուսկից վերջին տարիներս լսում ենք միայն մահուան, դաւաճանութեան և ցածհոգի սողկամտութեան ձայներ, — այսօր նա ծփում է ալէկոծութեան մէջ, այսօր նա ցնցւում է հայ ապստամբների աղաղակներից, այսօր նա զգում է գէթ վայրկենաբար, որ առօրեայ գձուձ մտահոգութիւններից դուրս՝ կայ մի այլ կեանք, — փէդայու կեանքը, կայ մի այլ հոգս, — հայրենիքի ազատութեան գերագոյն հոգսը:

Զէնքը շառաչում է երկրի բոլոր անկիւններում, թիւրք վաշտերը մորեխի պէս լցնում են գիւղ ու քաղաքներ, դահիճը կատաղութեամբ վազում է իր որսի վրայ և մի անգամ ևս ապարդիւն փորձ է անում թնդանօթների ծխի մէջ խեղդել հայկական շարժումը... Դիւանագիտութեան ներկայացուցիչները խնամքով արձանագրում են իրողութիւնները, միշտ աւելի և աւելի համոզւելով, որ չէ կարելի կատակ անել մի շարժման հետ, որի արմատները այնքան խոր են, և որ հայ մարտական կազմակերպութիւնը ընդունակ է աւելի ցնցող իրողութիւններով յիշեցնել Եւրոպային՝ իր պարտականութիւնները:

## ՄԱՐԷԻ ՏԱՂԸ

Չէն չուխտ եզներ կուտամ տանի,
Քանի ուզին՝ թող ծախի.
Թուանք մ'առնեմ զիմ Նիկօյին,
Տանեմ գրնեմ փէդային:

Իրեք ամիս մնաց թըմնի
Թամամ քըսան մէկ տարի
Ձնէլ, կորիմ — ի՞նչն ա ըսկսա,
Ցոր չգըռի փէդային:

— Տէ՞սար յէնօր մա՛րդ անտէր,
Լստեղ էկան աղեքներ,
Տեսա՞ր պզտիկ զէն փէդային
Քըսան տարու էլ չըկէր:

Ա՛խ, տէ՛ր Աստուած խոզխ չառնի,
Ջուր Նիկօյին ես տեսնի,
Դօշին փըշանք, խուանք ի թև —
Ա՛խ, յէնօր թո՛ղ խող մտնի:

Ա՛խ, մոռթեցին Սրգէն աղ-աղ,
Տըլի ազգիս մէկ մատաղ.
Մէ՛կ էլ կուտամ զիմ Նիկօյին
— Ա՛զգ, չուխտ աղէս քըզ մատաղ:

Խեղճ ու կրակ, ձեռն էրեսին
Մարէն թո՞րկի զիւր աղէն,
Սրգէյի պէս քուրդ անօրէն
Գայ սպանա՞ Նիկօյին:

— Յելլ՛ը, լաօ, թո՛ղ վարուցանք,
Էլ թո՛ղ աղօթք, ժամ ու վանք,
Էնոնցից քե փայտա չըկայ,
Յելլ՛ը, սազի՛ր քեօյ թուանք:

— Գնա՛, Նիկօ, թուանք բանցուր,
Զալըմ դիւշմնին վախեցուր,
Քեօյ նէօչ աղբօր, ա՛խ, նախիֆ խա՛ն,
Դարդըլու սիրտըս խովացուր:

ՉԱՐԽԻ-ՖԱԼԱՔ
(Վան)

## ԲԱԳՐԵՒԱՆԴԻ ԿՌԻՒՆԵՐԸ

Հ. Յ. Դաշնակցութեան երկու արշաւախմբերի գործունէութեան ասպարէզ որոշուած էր պատմական Բագրևանդ գաւառը, որի սահմանների մէջ գտնւում են Հին-Բայազէտն և Իւչքիլիսէի Ս. Յովհաննու վանքը:

Այս անգամ կռիւը աւելի դժւարին էր և ծանր պարագաների մէջ դրւած:

Հայ յեղափոխականը չէր կարող մոռանալ սուլթան Համիդի նենգաւոր քաղաքականութիւնը, Անդրանիկի հետ ունեցած բանակցութիւնների ժամանակ. Սասունի անպաշտպան մնացած գիւղերի կոտորածը, կանանց ու երեխաների սրի քաշելը: Նրա առաջ ձգւած էին Իւչքիլիսէ, Ղումլիպուջաղ, Ղարաբազար, Սէյդօ և Ջուջան աւերւած հայկական այն դժբախտ գիւղերը, որոնք զոհ էին գնացել քրդական և տաճիկ զօրքերի բարբարոսութիւններին մի երկու օր առաջ: Հազարաւոր ձայներ „վրէժ“ էին գոչում, և այս աղաղակները արձագանք գտնում քաջ ֆէդայու սրտում: Տաճիկ կառավարութեան յայտարարւած էր կռիւ: Հայ յեղափոխականն այս անգամ յարձակողական դիրք պիտի բռնէր: Բագրևանդ արշաւող խմբերն իրենց նպատակակէտ ընտրել էին տաճկաց զօրանոցները:

Նրանք յառաջ անցան:

Յուլիսի 11-ին, լուսաբացին, ալևոր Մասիսի փէշերում հանգչող Չնգլներ բարձունքների Ռէսի-Գոմէր բլուրի վրայ ծածանուեցին երկու Դաշնակցական դրօշակներ։ Այդ՝ վերջին կայանն էր, ուր պէտք է տեղի ունենար զինուորական խորհուրդ, և որտեղից պիտի կատարուէր առաջին յարձակումը։

Այդ բլուրից դէպի արևմուտք, մի սիրուն տափարակի վրայ, երևում էր Մօսունը, հայկական մի մեծ գիւղ, որի մի ծայրում հեռադիտակի միջոցով նկատւում էր զօրանոցը։ Դէպի հարաւ, բլրի ստորոտում, մի ձորակի մէջ ընկած էր Զօրի պահականոցը։

Ոչ արեգակի այրող ճառագայթները և ոչ էլ երկար ճանապարհի յոգնածութիւնը ու տանջող ծարաւը չէին թուլացնում ազատութեան կռիւների մէջ բախտ որոնող հայ զինուորի ոգևորութեան չափը։ Նոյն բլրի լանջում, մի խոտաւէտ մարգագետնում, ձգւում էր փամփշտապատ տասնեակների շարքը մի դրօշակի տակ, իսկ մի փոքր հեռու, երկրորդ դրօշակի տակ կատարւում էր զինուորական խորհուրդ երկու խմբապետների, երեք օգնականների և բազմաթիւ տասնապետների մասնակցութեամբ։ Դիտակները երբեմն դարձնում էին այս ու այն կողմ, չափում հեռաւորութիւններն ու յարմարաւոր դիրքերը և նորից խորհրդակցում մինչև որ կը պատէր մութը. ու մի մրափ տիրեց փոթորկալից առաւօտ գուշակող այդ ժամին։

Գիշերւայ ժամը 2-ին ոտի կանգնեց խումբը, խմբապետը նշան տուեց և շղթան շարժուեց։

Առաջից գնում էր վաղատը, պատկառանք ազդող դարաւոր կաղնին յիշեցնող Խենթը։

Բլրի ստորոտում խումբը բաժանուեց երկուսի, մեծ խումբը բռնեց Մօսուն տանող ճանապարհը, իսկ փոքրը Զօր։

Գիշերային լռութիւնը մի վայրկեան աղմկեց հրաժեշտի շշուկով և հեռաւորութեան մէջ փոքր առ փոքր անլսելի էին դառնում զէնքերի շփման խուլ շաչիւնը։

Մօսունի մի ծայրում, Քօրուն տանող ճանապարհի վրայ, ընկած էր անշուք զօրանոցը իր ցածլիկ պարսպապատ բակով, որտեղ Իւչքիլիսէի դէպքերի պատճառով աւելացրած զօրքերը, սենեակների փոքրութեան պատճառով, գիշերում էին բացօդեայ։ Այստեղ եղող զօրքի թիւը ճիշդ հաշւով 160 էր, որոնցից 50-ը նորակոչներ։ Զօրանոցից մի փոքր հեռու, գիւղական ջրաղացի մօտ, ցցուած էին երկու սպիտակ վրաններ օֆիցերների համար։

Երկու ժամեայ ճանապարհ կտրելով՝ յուլիսի 12-ին, Արտաւազդ խումբը երեք կողմերից պաշարեց զօրանոցը և վրանները։ Երկու հոգի կտրում էին Բայազէտի հեռագրական թելը։ Խմբից բաժանուելով, չորս ռմբաձիգներ աննկատելի կերպով իրենց ձգեցին զօրանոցի կտուրը։ Այդ ժամանակ միայն զօրանոցի շունը հաջեց, և հրացանի փողին կրթնած պահապան զինուորը սթափուելով՝ ձայն տուեց՝ „օ քիմ“, այն ո՞վ է։ Պահապանի ձայնը խեղդուեց կոկորդի մէջ, վաղատ Խենթի գնդակը ցած գլորեց պահապանին։ Վայրկենապէս զօրքը ոտքի կանգնեց և զօրանոցի մէջ եղողները դուրս թափուեցին՝ շատերը շապկանց։ Այդ վայրկենին երկու ռումբ միաժամանակ պայթեցին ուղիղ խռնուած զօրքի մէջ. աջ ու ձախ թափթփուեցին գալարուող դիակներ։ Կենդանի մնացած զօրքը սարսափահար՝ զօրանոց մտաւ և զինուելով, ներսի հրամանների սարսափի տակ, փորձեց դուրս գալ, բայց երրորդ և չորրորդ ռումբերը շէնքի մէջ աւերում գործեցին՝ ջարդ ու փշուր անելով դուռը՝ ցած թափուող դիակների կոյտերի հետ միասին. կուլի կենտրօնատեղին էր դա։

Իսկ այդ կենտրօնից մի փոքր հեռու, պարիսպների վրայից տեղում էր գնդակների տարափը՝ աջ ու ձախ թշնամու դիակներ սփռելով։ Զօրանոցի բակի մէջ իրարանցում էր տիրում. տղաները կորցրել էին իրենց գլուխը զօրքի շատութիւնից, երբ յանկարծ լսեց խմբապետի ձայնը՝ „թշնամին, տղանե՛ր“, որը տեղացող գնդակների տակ մտեցաւ հակառակ պարսպին։ Վրաններից դուրս թռած 16 զինուորները, որոնք պարսպի յետևից կրակ էին տեղում, րոպէապէս յետևից պաշարուեցին և տեղն ու տեղը ջարդ ու փշուր եղան. հէնց նոյն վայրկենին, մի փոքր հեռու, մթերանոցի մօտ, մի խումբ զինուորների մէջ պայթեց Համօյի ձգած ռումբը. Նրանցից միայն մէկը մնաց կենդանի։

Երկու ժամ շարունակ տեղացող ռմբային և մօսինի հրացաններից արձակած կրակից յետոյ, տիրեց մի գերեզմանային լռութիւն, զօրանոցում այլևս կենդանի մարդ չէր մնացել. մի փոքր թիւ միայն յաջողել էր զօրանոցի յետևի մի փոքրիկ դռնակից դուրս թափուել և գիւղի մէջ պատսպարան գտնել։ Այդ էլ իսկոյն յայտնի եղաւ, երբ հրացանների և ռումբերի ձայները լռելուց յետոյ՝ հազիւ սիրտ առած, գիւղի տներից տղամարդիկ սկսան դուրս գալ՝ զինուելով իսկոյն ատրճանակներով։ Նրանք յայտնեցին, որ տների մէջ կան նաև գիշերող զինուորներ, որոնք ոչ մի յարգանք չեն տածում դէպի ընտանեկան սրբութիւնը։ Այդ աւելի ևս կատաղեցրեց հայդուկին, սկսուեց գիւղի մէջ, փողոցներում և տներում խուզարկութիւն, բաւականին զինուորներ հէնց այդտեղ ընկան։ Գիւղը միանգամայն մաքրուեց տաճիկ պիղծ զինուորներից։

Այդ կռւում, ճիշդ թուեր բերելով, Մօսունի մէջ հայ ֆէդայու գնդակներին զոհ գնացին 120-130 տաճիկ զինուորներ, իսկ հայ զինուորներից ընկաւ մէկը և վիրաւորուեցին երկուսը։

### Բ.

Չնգլներ կոչուող բարձունքների ստորոտում արևելքից դէպի հիւսիս-արևմուտք ընկած է մի ձորակ, որ ձգուելով և սղմուելով գնում Ռէսի-գոմերի մօտ վերջանում է մի կիրճով, որի բաւականին նեղ անցքից դուրս գալով՝ մի ճանապարհ տանում է դէպի Մօսուն, ապա Բայազէտ։

Ահա այդ ձորակի մէջ ընկած է Զօրի պահականոցը, որտեղ լինում են 45-50-ի չափ զօրքեր։ Բացի այդ՝ ձորակի երեք ճիւղերի միացման արձակ տեղում փռուած է քրդական փոքրիկ աշիրէթի՝ ջէլալցիների մի օբան 60-ի չափ վրաններով։ Այդ պահականոցի յարձակումը յանձնուած էր „Մասիս“ արշաւախմբին։ Խմբապետի ուշադրութիւնից չէր վրիպել կիրճի հսկողութեան կարևորութիւնը, մանաւանդ այն դէպքում, երբ զօրքերին միանային նաև այդ վրանների մէջ ապրող քրդերը, որոնց կռուելու ընդունակ տղամարդկանց թիւը յամենայն դէպս 100-ից պակաս չէր լինի։

Յուլիսի 12-ի դեռ ևս աղջամուղջին՝ խմբի տասնեակները կարգով դիրքեր գրաւելով՝ կիրճի մուտքից սկսած մինչև վրանների թիկունքի ժեռուտները, սպասում էին խմբապետի նշանին, որը իր կողմից սպասում էր Մօսունի վրայ յարձակուելու րոպէին։ Այդ խմբից մի տասնեակ հսկում էր բարձունքների վրայ, թշնամուն թոյլ չտալու համար գրաւել այդ դիրքերը։

Մօսունի յարձակումը երկար սպասել չտուեց: Առաջին իսկ ռումբերը արձագանք գտան ամենուրեք: Զօրի պահականոցի պահապանը սարսափեց այդ անսովոր պայթիւնի ձայնից և րոպէապէս հրացանը ոտի մէջ ուղղեց ու արձակեց: Անգիտակցօրէն արձակեցին նոյնպէս տասնեակներից մի երկուսը. այդ ձայների վրայ զօրքերը դուրս թռան զէնքը ձեռքերնին, այդտեղ վազեցին նոյնպէս քրդերը, որոնք միանալով զօրքերին՝ գրոհ տուեցին դէպի կիրճի մուտքը: Յարմար րոպէն պատրաստ էր՝ բոռը նշան տուեց, և միաժամանակ ամէն կողմերից տեղաց գնդակների կարկուտը: Դիակները ճօճացին միմիանց վրայ, սարսափը տիրեց ձորակին, որի մէջ գլուխ կորցրած զօրքերը և քրդերը, այս և այն քարը, այս և այն թուփը վազվզելով, գլորւում էին հարիւրաւոր գնդակների տարափից: Թափուող կրակը տևեց մինչև առաւօտ. լոյսը բացուեց, յոխորտացող զօրքերի տեղ՝ դիակներ էին փռուած այս ու այն տեղ:

Այդ կոտորածից համարեա թէ ազատուողներ չեղան, բացի մի քանիսից, որոնք Ռէսի-գօմէր սարի վրայ դիրք բռնած՝ հատ ու կտոր պայթիւններով իրենց գոյութիւնն էին ցոյց տալիս: Այդտեղ կային կանայք և երեխաներ, որոնք վրաններից դուրս գալով՝ քաշուել էին հակառակ կողմի բլուրները. նրանց՝ հրամայուած էր խնայել: Այստեղ սպանուեց նաև իր քաջութեամբ անուն հանած էլբաշին իր տղայի հետ միասին:

Երկու ժամ տևող կռուից յետոյ՝ ձորակը լռեց և նրա մուտքն ու դիրքերը դրաւող տասնեակները քաշուեցին, որից յետոյ սկսուեց ծանր օրուայ յամառ ու երկարատև կռիւը:

### Գ.

Առաւօտ էր արդէն, առաւօտ մեծ օրուայ մեծ կռուի:

Մօսունի փախստական ժողովուրդը առաջ առաջ բարձրանում էր դէպի Չնգլի դիրքերը՝ զբաղեցնելով մի երկու տասնեակ, որոնք գնդակների տակ առաջ էին քշում 500-ից աւելի կին ու երեխաներ:

Գիշերային յարձակումները և սոսկալի կոտորածը ոտի էին կանգնեցրել շրջակայ քրդական աշիրէթները և զօրքը: Տղաները շրջապատուեցին միաժամանակ մի քանի կողմերից: Արշաւեցին քրդական աշիրէթները, որը ձիով, որը ոտով, որը զէնքով, որը անզէն: Արշաւեց զօրքը, հետևակ և հեծեալ հարիւրակներից կազմուած: Նորից երևացին քրդեր և բաշիբօզուկներ, դաշտի վրայ երևաց երկու թնդանօթ, որոնք սակայն մի որոշ տարածութիւնից չկարողացան այլևս առաջ շարժուել: Ռմբակոծութիւնը աննպատակ էր:

Մօսունի առաջ տարածուող դաշտը ծածկուեց անօրէն խուժանով:

Գաղթող ժողովրդին ուղեկցող մի երկու տասնեակ, ինչպէս և Զօրի վրայ յարձակուող տասնեակները սկսեցին բարձրանալ և փոքր առ փոքր դիրքեր գրաւել, միւս կողմից անընդհատ կրակ տեղալով թշնամու վրայ, ամէն անգամ թափթփելով նրանցից բազմաթիւ դիակներ:

Այդ օրուայ կռիւները նշանաւոր են թշնամու ունեցած զոհերի քանակութեամբ և մեր տուած մի երկու զոհերի անպատմելի քաջութեամբ, հերոսական մահուամբ:

Քրդական մի շէյխ, գլուխ անցած կատաղի ահագին մի խուժանի, փրփուրը բերանին, սալավաթ կանչելով և խրախուսանքներ կարդալով, յարձակւում էր Վահանի, Բաբկէնի, Համօյի և Գարեգնի դիրքերի վրայ և նորից յետ մղւում կոտորածներ տալով: Վահանի և Բաբգէնի հարուածները աննպատակ չէին անցնում: Թշնամու շարքերից անընդհատ գլորւում էին դիակներ:

Բաբկէնի կռուելու սառնարիւնութեան, ճիշդ նպատակին արձակելու ընդունակութեան և մինչև վերջին շունչը յամառ կռուելու տոկունութեան որպէս ապացոյց՝ ականատեսը պատմում է հետևեալը.

Բաբկէնի եղած դիրքի վրայ իշխելու համար 12 հեծեալ քրդեր փորձեցին մի պտոյտ գործել և գրաւել մի բարձր դիրք, բայց քաջ Բաբկէնը մէկիկ-մէկիկ, ինչպէս ասում են, ցած բերեց ձիերից այդ գազան քրդերին, որոնցից ոչ մէկն էլ կենդանի չմնաց:

Թշնամու ուշադրութիւնը դարձաւ այդ կէտի վրայ: Դիրքի անյարմարութիւնը և պաշտպանողների փոքրաթիւ լինելը մի կողմից, կռուողների յոգնածութիւնը և անընդհատ ու լարուած ուշադրութեամբ կռուելը միւս կողմից և թշնամու անվերջ խուժումը այդ դիրքի վրայ երրորդ կողմից—ստեղծեցին օրհասական դրութիւն, բայց այդտեղ էլ չորս կտրիճներ — Բաբկէն, Վահան, Համօ և Գարեգին — կռւում էին մի զարմանալի քաջութեամբ, գլորելով իրենց վրայ գրոհ տուող ահագին խուժանից բազմաթիւ դիակներ, մինչև որ իրենք ևս իրենց դիրքերում ծանր կռուի մէջ ընկան հերոսական մահով: Չորս հերոսների նահատակման տեղում, շատերի ասելով, թշնամին թողեց աւելի քան 150 դիակներ,—այնտեղ թափւում էր հայդուկային կրակը միաժամանակ մի քանի դիրքերից:

Մի ոչ պակաս յամառ կռիւ տեղի ունէր այդ րոպէին մի այլ դիրքում: Քրդերի մի բազմութիւն հիւսիսից և զօրքերի մի հարիւրեակ արևմուտքից յարձակւում ու մեծ կորուստներով յետ էին նահանջում մի դիրքից, որտեղից այդ յարձակման դիմադրում էին հինգ հայդուկներ՝ Սուրէնը, Հաջին, Սիմօն, Պետրոս և Մինաս: Կռիւը ծանր էր և անհաւասար: Դիրքի վրայ յարձակւում էին մի քանի ուղղութեամբ նոր կռուող ուժերով: Դիակները գլորւում էին անընդհատ, բայց յարձակումը չէր դադարում: Հինգ հոգու խումբը ստիպուած էր դիրքը թողնել, քաջ Սուրէնը և ալէխառն Հաջին առիւծի պէս դուրս թռան դիրքից, կրակ տեղալով և ընկան գնդակների տարափից. մի վայրկեան ևս՝ և երեք կտրիճները կարողացան դիրքը պահել, թշնամու առաջին շարքից զարկելով մի քանիսը միանգամից: Այդ օրուայ թշնամու կորուստը 250-ից անց էր:

Արևը թեքւում էր, տղաները գրաւում էին բարձր դիրքեր,—թշնամին յետ էր նահանջում ամօթահար:

Հռչակաւոր Չնգլի բարձունքների վրայ շուտով նորից ծածանեց Դաշնակցութեան յաղթական դրօշը:

### Դ.

Յուլիսեան արևը թեքուած դէպի հորիզոն իր բոլոր ջերմութեամբ դեռ ևս շարունակում էր այրել ջրից և բուսականութիւնից զուրկ Չնգլի ժեռուտ բարձունքները: Ամէն ինչ խաղաղ, օդի մէջ ոչ մի շարժում նկատելի չէր:

Ահա այդ բարձունքների մի թեք հարթութեան վրայ շունչ էր առնում ծծի երեխաներով և լացող մանուկներով ծանրաբեռնուած, տուն ու տեղ ձգած Մօսունի և Քօրունի գաղթող ժողովուրդը: Դառն ճակատագրից հալածուած կենդանի էակների այդ տեսարանը աւելի քան յուզիչ էր:

Ո՞ւր էին դիմում նրանք: Մի՞թէ տարբեր սպանդանոցների մէջ մարդկային տանջանքը նոյնը չէր: Սպանդանոցը միևնոյն էր ամէն տեղ, սակայն վերահաս սարսափը քշում էր մէկից դէպի միւսը:

Լուռով յայտնեցին ապստամբները. մի օրւայ ծանր կռւից յետոյ յոգնած ու դադրած տասնեակները դանդաղ քաշւում էին դէպի վերջին դիրքերը:

Նրանց հոգսը գաղթող ժողովուրդն էր, տեղապուրծ, բաց երկնքին ապաւինած այդ թշուառ ժողովուրդը, — հալածւած, տանջւած:

Նրանք սահմանի միւս կողմում ունէին հարազատներ, որոնց մօտ կարելի էր պատսպարան գտնել: Ահա այդ ծանր խնդրի լուծմամբ զբաղւած էր ֆէդա՛յին, երբ յանկարծ տեղացող գնդակների տարափից մի քանիսը զարկւեցին: Մի՞թէ թշնամին պաշարեց և թակարդի մէջ ձգեց: Մի՞թէ թշնամին յանկարծակիի բերեց: Այս հարցը վայրկենապէս անցաւ բոլորի գլխով և աջ ու ձախ պայթեցին հրացանները:

„Տղա՛յք, սահմանից կը տեղան գնդակները, համբերեցէք“: Այս ձայնի վրայ հայեացքները այն կողմը դարձան: Ցիրաւի ռուսաց սահմանի վրայ նախ կանգնած էր ռուսահպատակ քիւրդ Համիդ բէգը իր 200-ից աւելի հրացանաւորներով. իսկ նրանցից աւելի բարձր դիրքեր բռնած 300-ից աւելի պլաստուն կօզակներ և սահմանապահ զօրքեր կրակ էին տեղում:

Ճնշւածների համար արիւն թափող հայդուկի կըրծքում զայրոյթը սոսկում առաջացրեց:

Դաւաճանութի՜ւն, ստոր դաւաճանութի՜ւն:

Այնտեղ քրդի հետ միացած տաճիկ զօրքն էր հային կոտորում, իսկ այստեղ ռուսը:

Կռւելը անմտութիւն էր: Որոշւեց և բարձրացաւ խաղաղութեան դրօշը — միջազգային նշանը: Բայց ի զո՜ւր: Քրդի հետ միասին նրա դաշնակից ռուս զինւորը արհամարհեց զէնքը վայր դնելու այդ նշանը և շարունակեց կրակ տեղալ: Այն ժամանակ, երբ ռուս կառավարութեան Պոլսի դեսպանը սուլթանին առաջադրում էր հայկական ռէֆօրմների ծրագիրը, — ռուս զինւորը քրդի հետ միացած՝ կրակ էր տեղում նոյն հալածւած հայի վրայ: Ո՛վ զազրելի քաղաքական կեղծութիւն...

„Տղա՛յք, զատէ՛ք գաղթականներից և զէնքերդ ուղղէ՛ք միմիայն քրդին — մեր դարաւոր թշնամուն, իսկ ռուսին մի դիպէ՛ք, առայժմ մենք կը բաւականանք Եւրոպայի առաջ դնելով նրա դաւաճանութեան, նենգաւոր քաղաքականութեան և մեր դէմ ուղղած դաւադիր զէնքի այս սոսկալի, ամօթաբեր փաստը“:

Այս խօսքերի հետ խմբապետը առաջ անցաւ, նորից տեղաց հայդուկի կրակը, երկու կողմից ընկան դիակներ, մինչև մութը կոխեց սար ու ձոր:

Ռուս զինւորի վրայ կրակ չէր թափւում, թէև նա շարունակում էր Համիդ բէգի թիկունքը պահել: Տաճիկ զօրքերի և զօրանոցների վրայ կատարեալ յաղթութիւն տարած ապստամբները ռուսների կրակի տակ կորցրին 12 հայդուկ, նոյնչափ կորուստ ունեցաւ Համիդ բէգը:

Հորիզոնի յետևից մեղմիկ կերպով իր շրջանն սկսող արծաթափայլ լուսինը, Ձնգլի բարձունքների և ձորակների մէջ երևան հանեց շարժւող ստւերներ — դրանք ռուս կօզակներն էին, որոնք կողոպտում էին ընկած հայդուկների դիակները...

—

Գաղթական ժողովուրդը վերադարձած է իր տեղերը: Բայազէտի փաշան երաշխաւորել է, որ նոր յարձակումներ չպիտի տեղի ունենան:

Հ. Յ. ԴԱՇՆԱԿ. Գ-րդ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷ

# ԻԳԴԻՐԻ ԲՈՐԵՆԻՆ

—

Վերջապէս ընկաւ Բօգօսլավսկին և հասարակական խիղճը հանգստացաւ: — Բայց ո՞վ էր Բօգօսլավսկին և ինչո՞ւ ընկաւ: — Տասներկու տարուց աւելի Բօգօսլավսկին գաւառապետ էր Սուրմալուի գաւառում և մի ամբողջ գաւառ կառավարելու համար մարմնացրել էր իր մէջ կաշառակերութեան ամենամեծ չափը, խղճի կատարեալ քարացումը, բարքերի ապականութիւնը, խելքի բացարձակ բացակայութիւնը, բռնակալութեան, ճնշումների և ժողովրդին հարստահարելու ամենագազանային, վայրենի հակումներ — նրա գործած բռնութիւնները և գազանութիւնները այնքան շատ են, որ հաշւել չի լինի: Առանց դատարանական վճռի, Բօգօսլավսկու կամայական դրամական տուգանքներին ենթարկւել է ամէն մի իգդիրցի:

Սուրմալուի սահմանները փակել ու ճանապարհները կապել կամայականօրէն և երթևեկութիւնը օրերով դադարեցնել, դա սովորական բան է եղել Բօգօսլավսկու համար: Գործով գնացած մարդկանց արգելւում էր Իգդիրում մնալ:

Տանուտէրներ և ջրպետներ ընտրելիս՝ սպառնալիքների ու ծեծի սարսափի տակ իր ցանկացած մարդիկ ընտրել տալը՝ նոյնիսկ լրագրութեան նիւթ է դարձել:

Հրապարակով հայհոյանքի, անպատւութեան ու ծեծի է ենթարկւել իւրաքանչիւր, նոյնիսկ „պատւաւոր“ իգդիրցի, չնչին բաների համար: Նա պահում էր լրտեսների մի բանակ, ստոր արարածների մի խումբ, խայտառակութեան մի գործիք (Բալա բէգ), և հարիւրաւոր սարաժնիկներ, որոնք իրենց կարգին մի-մի Բօգօսլավսկիներ էին:

Անտեղի կերպով նա աքսորել տւեց Սուրմալուից բազմաթիւ մարդիկ, որոնց երկար ցուցակից կը բերենք մի քանիսը միայն:

Ջիլֆիղտոցի Խալֆա Կուլի բէգ, Թիւրք Եաղուբը, Մարտիրոս Կանայեանց, Յակովբ Կանայեանց, Գրիգոր Տէր Թովմասեանց, Տաշբուռունցի Մարգարը և շատ շատերը, — այն էլ խաբեբայութեամբ, հասարակական կեղծ վճիռներով:

Նրա գազանութիւնը արտայայտւում էր առանձնապէս ծեծի մէջ, որ տւել է դժբախտացածների մի շարք:

Այդ շարքից մեզ յայտնի են՝ Գէորգ Մուխսի Բաղդասարեան, որը խլացաւ ընդ միշտ, կառապան Պօղոս Խանամիրեան, որը կառքը ուշ տալու համար սոսկալի ծեծի տակ կորցրեց լսելու ընդունակութիւնը և Իգդիրից գաղթեց: Բայազցի Աւետիսի 8-10 տարեկան տղան ենթարկւելով այդ գազանի բռունցքին՝ վախից հիւանդացաւ և ստացաւ բարակցաւ: Ատամներ փշրելու և գլուխ ջարդելու դէպքեր անթիւ են: Գաւառի միւս գիւղերում մարդկանց՝ եզների փոխարէն լծում էր և վարում արտը:

Այժմ լսէք աւելի սոսկալին՝ ծեծից մահացածների ցուցակը: 1894 թ. Երևանի նահանգապետ Ֆրէզէն Իգդիր գնաց Բօգօսլավսկու վրայ եղած բողոքները

քննելու։ — Բօգօսլավսկին երկար կանգ չառաւ, նոյն գիշեր Իգդիրի տանուտէր Եգնակի միջոցով քանդել տւեց ռուսաց դեռ նոր սկսած եկեղեցու հիմքը, այդ գործը ձգեց հայերի վրայ, բանտարկել տւեց վեց անմեղ հայեր, որոնցից երկուսը, Վահրամ Աբրահամեան և Ադամ Կանայեան սոսկալի ծեծից հիւանդացան և մեռան։ Հէնց այդ ժամանակ էլ Ֆրէզէն բարեկամացաւ Բօգօսլավսկու կնոջ հետ և այդ օրից դարձաւ այդ գազանի թև ու թիկունքը. . .

Այդպիսի մի „շառ“ ևս նա սարքեց 1901 թւականին, գիշերով մարդիկ ուղարկելով զօրքերի մթերանոցի վրայ (ցէյխհաուզ), և այդ վերագրելով հայերին՝ անտեղի բանտարկութիւններ կատարեց։

1898 թւին մեռաւ ծեծի տակ Ալի Ղամառլու գիւղացի Թադէոսը։ Դրանից մի տարի ուշ, նոյնպէս ծեծի տակ մեռաւ Բլուրի տանուտէրը։

1903 թւին մեծ աղմուկ հանեց ալիջանցի տանուտէր Սերոբ Խսայեանցի մահը. առողջ մարդը Իգդիրից վերադարձաւ ջարդ ու փշուր, մարմնի կապոյտակներով, բեխերը փետած և մի օրից յետոյ մեռաւ։ Տաս օրից յետոյ կատարւած քննութիւնը ոչինչ չ՚ապացուցեց, ինչպէս ամէն անգամ. Սարսափի տակ՝ նոյնիսկ մեռածի եղբայրները հրաժարւեցին վկայութիւն տալուց։

Այս գարնան, երբ Բօգօսլավսկուն դեռ ևս չէր յաջողւել կալւածական խնդրի և ցոյցերում ընկածների ու աքսորւածների կսկիծը հանել տալ Սուրմալուի հայ ժողովրդի սրտից, ծրագրեց և պատրաստեց մի խռովութիւն հայերի և թիւրքերի միջև։ Զրպետի ընտրութիւնը լաւ առիթ էր։ Նախօրօք նահանգապետից խնդրեց թոյլ տալ Իգդիրում եղած կօզակներին իր տրամադրութեան տակ առնել, որոնց ցրւելով Իգդիրի փողոցները՝ հրաման տւեց պատահած հային խփել, ծեծել. բայց կօզակների գլխաւորը արգելեց այդ, հայերը և թիւրքերը իմացան այդ բանը և միջոցներ ձեռք առան առիթ չստեղծելու։ Բօգօսլավսկու սարքած մի հայի և թիւրքի կռիւը ընդհանուր կռւի չփոխւեց և այդ կերպ Իգդիրի վրայից անցաւ դիւային մի ծրագիր։

Այսպիսի փաստերի շարքում աւելորդ ենք համարում առաջ բերել այն տուն ու տեղի տէր մարդկանց ցուցակը, որոնք Իգդիրի սահմաններից դադարկուն են ընկել Բօգօսլավսկու ձեռքից։

Այդ գազանը միայն հայատեաց չէր, այլև մարդատեաց, բառի բուն նշանակութեամբ, թէև հայերը աւելի էին նրան գրգռում։ Նա հայհոյում էր նոյնիսկ կրօնները և կրօնական սրբութիւնները։ Նա չէր քաշւում նոյնիսկ իրեն հրապարակով Իգդիրի Աստւած անւանելուց։

Ահա թէ ինչու նա կրում էր զանազան մականուններ։ Թիւրքերը նրան անւանում էին „ջանաւար“, այսինքն վայրենի մի գազան։ Ռուսները „դանտիստ“ անունն էին տալիս, որ փոխաբերական մտքով ատամ փչրող կը նշանակէ։ Իսկ հայերի կողմից նա ժառանգեց „բօլեենի-մարդագէլ“ անունը։

Եւ իսկապէս նա մի մարդակեր էր, մի գազան, մի հրէշ, որի նմանը աշխարհ բերելու համար հարկաւոր էր լինել Պլէվէ, Գօլիցին, Ֆրէզէ և նրանց ստեղծած ռէժիմը։

Այս բոլորը քաջ յայտնի էր Կովկասի վարչութեան։ Իգդիրցին տասներկու երկար տարիների ընթացքում իսկական և անստորագիր բողոքներով հեղեղեց ոչ միայն այդ վարչութեան դիւանատները, այլև մինիստրական կաբինետները, բայց անօգուտ,—այդ գազանը համարւում էր ռուս կառավարութեան այժմեան ռէժիմի անհրաժեշտութիւնը։

Բայց մի ամբողջ գաւառի հարիւր հազար ժողովրդի ինքնասիրութիւնը, մարդկային արժանապատւութիւնը այդպիսի անարդարութիւն տանել չկարողացաւ. նրա մէջ գլուխ բարձրացրեց բողոքի ձայնը, աղաղակող խիղճը, բուռն ցասումը և այդ ընդհանուր զայրոյթը արձակեց մի վճիռ, իսկ վճիռը իրագործեց մի անհատ, որի մէջ կուտակւած էր այդ զայրոյթի ամենամեծ չափը։

Բօրենին ընկաւ՝ ճակատից ընդունելով գնդակի հարւածը, և հասարակական խիղճը հանգստացաւ։

# ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

## ՏԵՂԵԿԱԳԻՐ ԽԱՐԲԵՐԴԻ ՇՐՋԱՆԻ

—

Խարբերդ, 8/21 մայիս

Կը կարծենք թէ, պէտք եղածը չի գրւեցաւ ասկէ ամիսներ առաջ վերջացող այն քաղաքական խնդրոյն նկատմամբ, որ այս գաւառին համար նշանակելի դէպք մը եղաւ, անգամ մըն ալ հաստատելով համիդական վարչութեան զզւելի շնականութիւնն ու անխիղճ հարստահարութիւնը։ Երկիր մըն է ասիկայ, ուրկէ, աւա՜ղ, լսւած ձայները միևնոյն ողբը կուլան, միևնոյն ցաւի գանգատը կ՚ընեն, ու միշտ արցունք, միշտ հեծեծանք, միշտ տքոց։ Թղթակիցը, որ գրիչը ձեռք կ՚առնէ գրելու, ամէն անգամ ակամայ կ՚անդրադառնայ, թէ իր լսածներն ու ըսելիքները միշտ իրարու կը նմանին. ինչ որ երէկ էր, նոյնն է այսօր և անկասկած նոյնը պիտի ըլլայ նաև վաղը։ Աւելորդ կրկնութիւն մը չէ՞ միթէ ասիկայ, որ ձանձրոյթ մը կը պատճառէ օտարներու, բայց ի՞նչ ընես. ցաւը կայ ու իր սաստկութիւնը աղաղակել կուտայ, հոգ չէ, թէ այդ աղաղակը մարդկութեան գթութեան ականջին հասնի թէ ոչ։

Բուն խնդրոյն անցնելէ առաջ՝ կարևոր կը նկատենք կարգ մը բացատրական նախադասութիւններ, զա՛յն աւելի հասկնալի դարձնելու համար։

Խարբերդի նախորդ կուսակալն էր Րէուֆ պէյ, որ ասկէ մօտաւորապէս 8-9 ամիս առաջ պաշտօնանկ եղաւ։ Ասիկայ մարդ մըն է, որ անձնապէս բ ա ր ի ու ա ն կ ա շ առ ի համբաւը ձգեց հոս իր վեց եօթը տարւան պաշտօնավարութեան տևողութեանը միջոցին։ Լուրջ էր, բայց շատ երկչոտ, որ ուրիշ չորիք մը կրնայ սեպւիլ, քանի որ եռբէք ազդու վարչութեան մը չկրցաւ գործադրողն ըլլալ, և ասիկայ խոստովանելի թերութիւն մըն է կուսակալի մը, որ այսպիսի երկրի մը մէջ, ուր „չարիքի պարտէզը“ կը ծաղկի, ուր ոճրագործութիւն, հարստահարութիւն, բռնութիւն, ցեղային ատելութիւն՝ բարոյալքուրկ ու վատթարացած ընկերութեան մը յատկանիշ եղեր են։ Արուամոլ էր, բայց խնդիր չէ ասիկա, քանի որ հոս երբէք աչքառու թերութիւն մը չնկատւիր թիւրքերու կողմէ։ Արդ, ըսենք թէ Րէուֆ փաշայի դէմ հակառակ կուսակցութիւն մը կար հոս, տեղացի թիւրք հասարակութեան կարգ մը մարդոց և կարգ մը պաշտօնեաներու կողմէն բաղկացած, ո՛չ թէ անոր համար,

որ Րէուֆ փաշային մէջ արուագէտ, թոյլ կամ անվարչագէտ մարդ մը կը տեսնէին, այլ լոկ անոր համար, որ կաշառակեր չէր և հետևաբար բաղձացող չէր հայուն հարստահարութեան կամ ուրիշ անունով քաղաքական խնդիրներու, ուր շահագործութեան արգասաբեր ու անսպառ դաշտ մը կար թիւրք պաշտօնէութեան մեծամասնութեան համար։ Սակայն կուսակալ մը ինչով կարելի էր հեռացնել իր պաշտօնէն՝ երբ այսօր կեդրոնը, կամ որ նոյնն է խալիֆան, քիչ նկատողութեան կ'առնէ հասարակութեան գանգատը կամ բողոքը, իր երկրին բոլոր մեքենան կը լարէ իրեն յատուկ ու լոկ իրեն գաղտնի զսպանակով մը։ Ուստի ամէն պարագայի տակ պէտք էր ստեղծել քաղաքական խնդիր մը, որ անվրէպ և միակ միջոցն է ամէն նպատակի իրագործման։ Րէուֆ փաշայի հրաժարեցման խնդիրէն ետք, կար նաև ուրի՛շ գլխաւոր պատճառ մըն ալ, որ թխսեց այնքան դժբախտութիւններ։

Ջարդի օրերուն, իրաւ է թէ Խարբերդ համեմատաբար քիչ թիւով անձի կորուստ ունեցաւ, անոր համար աչքի երևցող հայ կարևոր անհատներ թիւրք խուժանին կողմէ գէշ կերպով կը դիտուէին, հետևաբար պէտք էր կա՛մ նոր ջարդ մը սարքել և կամ այդ աչքի զարնող հայերը կերպով մը ոչնչացնել։ Այս նպատակին համար ալ տեղական յուզում մը յառաջ բերել պէտք էր, բան մը, որ դիւրին է ինքնին, նկատի ունենալով ջարդի աւերման ու կողոպուտի վարժուած անսանձ հասարակութեան մը սպառնալից տրամադրութիւնները։

Եւ ահա հերու, ճիշդ այս օրերուն, յանկարծ լուր մը կը տարածուի թէ, Խարբերդի մէջ—հին քաղաքը, որ ժամ մը միայն հեռու է Մէզիրէ կուսակալանիստ կեդրոնէն—Ցարութիւն Սէմէրճեան անունով համեստագործ հայ երիտասարդի մը տունը խուզարկուած և ինքն ալ ձերբակալուած է։ Այս երիտասարդը՝ դէպի Ամերիկա գաղտնի ճամբորդներ փախցնող ջորեպաններու միջնորդն էր, այսինքն իր կողմէն գիւղերէն ու քաղաքներէն դէպի Ամերիկա փախցնողներ հաւաքելով կը յանձնէր իրեն ընկերակից ջորեպաններու։ Չի մոռնանք հոս աւելցնելու թէ, Խարբերդ այն միակ գաւառն է, որ ամենէն շատ պանդուխտ ունի Ամերիկա, թիւով մօտաւորապէս 12-15,000, ամենքն ալ ընտանիքի հայր, կամ զաւակներ, որ հոս մայր ունին, հայր ունին, քոյր ու եղբայրներ ունին, մէկ խօսքով՝ ընտանիք մը։ Արդ տասնեակ տարիներէն աւելի է որ կառավարութիւնը խստօրէն արգիլած է դէպի Ամերիկա պանդխտացումը, նախ անոր համար որ արդիւնագործող, երկրագործ ու աշխատող հայ տարրը կը նուազի, երկրորդ՝ անոր համար, որ հայը ազատ երկրի մը մէջ տեսնելով արդարութեան, իրաւունքի ու ազատութեան փրկագործ բարիքները՝ աւելի գիտակցօրէն կը զինուի բռնակալութեան դէմ, լայնօրէն վերահասու կ'ըլլայ իր թշուառութեան և կը դառնայ աւելի վտանգաւոր։ Երկիրը չ'ապրեցներ, առևտուրը ամբողջովին դադրած է ու արհեստներն ալ հոգեվարք, երբ անդին բռնութիւնն ալ նոյն չափով կ'աճի ու արմատ կը բռնէ։ Ի՞նչ ընել պէտք է։ Ամէն զոհողութեամբ հեռանա՛լ, միա՛յն հեռանալ և ահա հօսանք մըն է որ ծայր տուեր կ'երթայ, դէպի ո՞ւր, միշտ դէպի Ամերիկա։ Ընտանիքի հայր կայ որ տասը տարիներէ աւելի է իր կնոջ, իր զաւակներուն երեսը տեսած չէ. հարս կայ որ իր էրկանը հետ հազիւ քանի մը ամիս կամ տարի մը կենցաղելէ ետք՝ հոս իր գեղան տանը մէջ իզո՞ւր կըսպասէ սիրելիին. ո՛չ գացողը իրաւունք ունի դառնալու, ո՛չ մնացողը՝ երթալ իր սիրելիին միանալու։ Ուստի դիւրին է հասկնալ թէ ճամբորդի փախըստականութիւնը բանուկ առևտուր մը դարձած է այս ու այն ջորեպանին ձեռքը, որոնք մէկ կարաւանով 15-20 հոգի կը փախցնեն լեռնային գաղտնի ու դժուարանցանելի ուղիներէ կամ նաւահանգիստներէ, մէկ անգամէն 100-200 ոսկի շահ մը գրպանելով։

Դառնանք բուն խնդրոյն։ Ցարութիւն Սէմէրճեանի ձերբակալութենէն հազիւ երկու-երեք օր անցած էր, որու միջոցին երիտասարդին նկատմամբ տանջանքներու սոսկալի լուրեր տարածայնութիւն գտան — յանկարծ լսեցաւ թէ՝ Ցարութիւնը Խարբերդի կառավարական շէնքին պատուհանէն վար նետեր են. թէ ինչո՞ւ, մարդ չի գիտեր. միայն՝ երիտասարդը ողջ, բայց խեղանդամ մնացեր է, ջախջախուած ըլլալով ոսկորներն ու գլուխը, և մահամերձ վիճակի մէջ կը գտնուի։ Քանի մը օր ալ անցաւ և ահա կատաղի խուզարկութիւններու և ձերբակալութեանց շարք մը սկսաւ որ տևեց երկու ամսէն աւելի։

Այս միջոցներուն կուսակալ Րէուֆ փաշան քննական պտոյտի ելած էր, ինչպէս սովորութիւն է՝ տարին կամ մէկ-երկու տարին անգամ մը. անոր այդ բացակայութենէն օգտուելով՝ պետական լրտեսներու, շահախնդիր և ուրիշին թշուառութեան մէջ իրենց բարձրացումն ու դիրքին ապահովութիւնը փնտռողներու փոհմակը՝ յատուկ սադրանքի ծրագիր մը պատրաստած էր և ահա կը գործադրուէր։ Համրենք ատոնց անունները.

Մէքթուպճի.—Պետական լրտես ստորնկարագրով։

Փոլիս Մուֆէթթիշի Մուստաֆա.—որ ուղղակի լրտեսի պաշտօնով ղրկուած է Կ. Պոլսէն լիաթոշակ ամսականով, անխիղճ վատութեամբ և ստոր գործերով յառաջացած։

Դատական քննիչ Համտի պէյ.—Կաշառակեր, սինլքոր արարած մը, տգէտ ու վտանգաւոր այնչափ՝ որչափ կարելի է երևակայել մեծամարմին և չարաշուք դիմագծով մարդուկ մը։

Խարբերդի գատին՝ Քէյզիւլռահման.—Կովկասցի թլւատ լեզուով թրքախօս թաթար մը, տգէտ, յիմար և ցած հոգի։

Խարբերդի Մալ-միւտիրին.—Կաշառակեր, արիւնարբու և նենգամիտ, որ Արաբկերի ջարդերուն՝ աննկարագրելի չարիքներով դիրք ու դրամ շահած է։

Մէզիրէի Ա. Գոմիսէր Մուխլիս.—Տգէտ, երկչոտ, բայց կաշառակեր, ուղտապահի գանկով ու երևոյթով ապուշ մը։

Խարբերդի Գ-րդ Գոմիսէր Համտի.—Բոզ մօր մը զաւակ, էֆէնտիներու արուագիտական ախտին ծառայած իր պատանեկութեանը ու այդ միջոցով բարձրացած, միևնոյն ատեն պզտիկ մարդու ալ մեծ փառասիրութեամբ տկռած։

Ասոնք բեմին վրայ գործող դերասաններն եղան, որոնց ամենէն գործօնն ու խիզախը վերջինն եղաւ, բայց դեռ իրենց ետին կային Խարբերդի սօֆտաները, կրօնամոլ ու հարստահարիչ թիւրք մեծատունները և կարգ մը երկրորդական պաշտօնեաներ ալ, որոնց անունը հոս տալն անգամ իրենց պատիւ մը պիտի ըլլար։

Ինչպէս ըսինք խուզարկութիւնները յամառօրէն և

սարսափահար կերպով շարունակեցան երկու ամիսէն աւելի թէ Խարբերդի և թէ Մէզիրէի մէջ. սպիտակ տէռօրը կը տիրէր։ Հայերը գունատ, գլխիկոր և յուսահատ կըսպասեն անստոյգ բանի մը, սպառնալիքի մը, իւրաքանչիւրը իր կարգին դժբախտութեան մը անակնկալութիւն ունի, մանաւանդ որ ձերբակալուածները ամէնքն ալ փոխադրուած են Խարբերդի կառավարական շէնքը, ուր կը լսուի թէ գիշերները անլուր տանջանքներ, խոշտանգումներ կը կատարուին։ Ոչ մէկ հայ յանդգնութիւնը ունի կառավարական շէնքին մօտենալու կամ նոյն իսկ դէպի վեր՝ պատուհանները նայելու. մէկ քանիներ այդպիսով կասկածելի նկատուեցան ու բանտարկուեցան քանի մը օր։ Գործ, առուտուր դադրեցան. նոր ջարդի մը երկիւղը սկսաւ տիրական դառնալ։

Րէուֆ փաշան իմանալով Արաբկերէն՝ հոս անցած դարձածը, ճամբայ կ'ելլէ պաշտօնավայրը փութալու, բայց կէս ճամբուն կաթուած կ'ունենայ։ Բժիշկներ կը վազեն իր քով և հիւանդը կը փոխադրեն իր տունը, ուր փակուած կը մնայ, մէկ կողմէն հիւանդութեան, միւս կողմէն իր անել վիճակին պատճառով՝ անկարողութեան մատնուած, լաւ հասկցած ըլլալով թէ խաղցուած խաղը իր գլխուն վրայ կը դառնայ։

Խուզարկութիւնները սկսելէն ամիս մը ետքն է որ նոր դէպք մըն ալ կուգայ՝ խնդիրը աւելի ծանրացնել ու շփոթել։ Խարբերդի հիւսիսային արևմտեան կողմը՝ Եփրատի եզերքը գտնուող Աշուան գիւղին մէջ կրկնակ ոճրագործութիւն մը կը պատահի ցորեկին, սպաննուելով ոստիկան մը և կէմիճի Իսմայիլ աղա ըսուած քիւրդ պէկ մը։ Այս երկու սպաննութիւններն ալ կը վերագրուին Յարութիւն Սէմէրճեանի երկու ջորեպան հայ ընկերակիցներուն, որոնք Յարութիւնի ձերբակալումը, կրած տանջանքները և իրենց փնտռուիլը լսելով փախած անյայտ եղեր էին։ Բայց ոճրագործութեան վայրին վրայ չձերբակալուեցան ասոնք, 10-15 օր ետքը միայն ձեռք անցան Մէզիրէէն կէս ժամու հեռաւորութեամբ Սիւրսիւրի գիւղին մէջ։

Րէուֆ փաշան դեռ իր հիւանդութիւնը չապաքինած՝ իր պաշտօնանկութեան հեռագիրը ստացաւ։ Տռամին առաջին արարուածը խիստ յաջող վերջացաւ։ Եւ ինչո՞ւ չէ, քանի որ այստեղէն օրը օրին լրտեսներու և ոստիկանութեան կողմէ Պոլիս տրուած հեռագիրները՝ խնդիրը իրենց ուզած գոյներովը ու համեմատութեամբ ներկայացուցած էին, տեղեկագրելով թէ խռովարարական մեծ խումբի մը գոյութիւնը երևան հանած էին՝ 400 մարթին հրացաններով, վտանգաւոր թուղթերով և սպառազինութեամբ։

(Կը շարունակուի)

## ՌՈՒՍ-ՏԱՃԿԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԼԽԻՑ

13 Օգոստոս

Ձեզ արդէն յայտնի կը լինեն Բագրևանդի փայլուն կռիւների մանրամասնութիւնները։ Յաջողութիւնը աւելի եղաւ, քան սպասում էինք։ Ռումբերի դղրդոցը հասնում էր մինչև Ռուսաստանի սահմանակից գիւղերը։ Շատերը լեռներն էին բարձրացել՝ յոյս ունենալով գոնէ հեռուից դիտել զինուորների ու քրդերի ջարդը։

Իրիկուան մօտ, սակայն, ռուս պահապան զինուորները միացած Համիդ քիւրդ բէկի 200-ի չափ ձիաւորների հետ՝ հրացանների ձայներով գտնում են տղաների հետքերը և յանկարծակի վրայ տալիս։

Տղաները, իրենց ամբողջ ուշադրութիւնը տաճկաց կողմը դարձրած լինելով և բոլորովին չկասկածելով, թէ ռուսական սահմանի կողմից կարող է որևէ յարձակում տեղի ունենալ, մեծ կորուստ են ունենում։ Մինչդեռ ամբողջ օրւայ ընթացքում մերոնցից ընկել էին ընդամենը 8 հոգի, այդտեղ սպանւում են 19 և գերի ընկնում 33 ընկերներ։ Կարողանում են ազատուել միայն 42 հոգի։

Չնայած, որ ռուս զինւորներին ոչ մի դիմադրութիւն չի լինում, նրանց կողմը ոչ մի գնդակ չի արձակւում, չնայած դրան՝ գերիների հետ վարւում են ամարդի կերպով, կարծես ռուս իշխանութիւնը ամեն ճիգ թափում է մոռացնել տալու տաճկական առասպելական զնդանները։

Մի նոր, աւելի բարբարոս կարգադրութիւն տեղի ունեցաւ Պետերբուրգ քաշուած հայակեր Գոլիցինի յաջորդ Ֆրեզէի կողմից. սա հրահանգել է, որ սահմանի մօտերը պատահած ամեն մի զինուած հայ գնդակահար անեն, առանց քննելու, թէ ինչ մարդ է։ Տեսնենք, այդ երկրորդ տխրահռչակ կովկասեան կառավարիչը մինչև ուր պիտի հասցնէ իր թաթարական գազանութիւնները։

Յուլիս 10-ին գիշերւայ ժամը 12-ին, տէռօրի ենթարկւեց Իգդիրի գաւառապետ յայտնի Բօգօսլաւսկին։ Մահը վայրկենական էր։ Տէռօրիստները ազատ են։ Բայց նրանց փոխարէն բանտարկւեցին անմեղ մարդիկ։ Այսպէս էր և Էջմիածնի գաւառապետ Շմերլինգի սպանութեան փորձից յետոյ։ Կառավարութիւնը իսկական տէռօրիստներին ձեռք ձգել չկարողանալով, բանտարկեց և զինւորական դատի ենթարկեց բոլորովին անմեղ մարդկանց։ Բայց այս անգամ անմեղների բանտարկութեամբ չգոհացաւ. Ֆրիզէն իր սիրուհիի ամուսնուն մահւան վրէժը ուրիշ կերպով լուծեց. նրա հրամանով Իգդիրը ենթարկւեց է կ զ է կ ո ւ ց ի ա յ ի. լցնել տւեց այդ գիւղը 200 կօզակներով, որոնց ժողովուրդը պիտի պահէ իր հաշւով և որոնց ամեն մի քմահաճոյքը պիտի կատարէ խոնարհութեամբ։

Խստութիւնները աճում են. բայց դրա հետ միասին սարսափն էլ աճում է պաշտօնեաների սրտերում, դրա հետ միասին հայն էլ բարձրանում է հոգեպէս։

## ՆԱՄԱԿ ԱԼԱՇԿԵՐՏԷՆ

*Համիդիէներ Ալաշկերտի գաւառում.— Ի նպաստ տաճիկ զինուորների եղած հանգամանքութիւններ.— Թրքական նոր տրամադրութիւն.— Նոր տուրքերի հաւաքման կարիք.— Համիդիէի զինումը.*

Մի քանի ամիս էր, որ համիդիէները 50-60 հոգով նստած խեղճ հայ ժողովրդի տան ու տեղաց վրայ, ուտում էին, աւրում, գողանում, տանջում, հալածում և բռնաբարում։ Անվերջ բողոքները ոչինչ չ'արին, մնացին անլսելի, մի հանգամանք, որ աւելի էր գրգռում այդ վայրենիներին։ Եւ ժողովուրդը՝ յուսահատ, ճարը կտրած, տալիս էր համիդիէի հացը, կրակ ու ճրագ, տալիս էր յարմարութիւններ, ձիերին ուտեստ և ակամայ լռում ու խոնարհւում էր նրանց ամեն մի լրբութիւնների առջև. Այդպէս տևեց մինչև ձմեռը վրայ հասաւ, փակեց սար

ու քար, ճար ու ճամբէն։ Այդ ժամանակ եկաւ տաճիկ պաշտօնեան, քննեց, գիտեց և թոյլ տուեց, որ զինաթափ լինեն այդ վայրենիները, ասելով՝ „այժմ այլևս չեն կարող գալ հայ ֆէդայիները, պէտք է ցրուել մինչև գետինը կը բացուի“։

Անցած դեկտեմբերի վերջերին կառավարչական կենտրոններում՝ Գարաքիլիսէում, Տիատինում, Բայազիտում, կառավարութիւնը մերկացնում է պահապան համիդիէներին և առնում նրանց զէնքերն ու հանդերձները։ Այդ տխմարները երբէք չէին երազում, որ այդպիսի օր է սպասում իրենց. կրկին գնով վճարեցին փճացրած փամփուշտների արժէքը, խնդրեցին, որ գէթ մի վերարկու մնայ իրենց, իբրև ձմեռուայ պատսպարուելիք, բայց ի զուր։ Եւ հեռացան մերկ, փոշեման, հայհոյանքով ու ատելութեամբ։

Սոված կառավարութիւնը իր ուժերը լարում է գլուխը պահելու համար։ Անվերջ տուրքերը, կաշառքները, կողոպուտն ու թալանը հերիք չեն նրա կարիքները հոգալու, հերիք չեն նրա կոկորդը լցնելու, և այսօր նա նոր միջոցներ և հնարքներ է ստեղծել — դիմումն անել կանանց, որ նրանք էլ օգնեն։ Փատիշահի զինուորներին ուտեստ թէ հանդերձեղէն է հարկաւոր, որ ոյժ ունենան „սուրբ հաւատը պաշտպանելու“։ Եւ այդ նպատակով հրաւէր է ուղարկուած բոլոր խանումներին ու խաթուններին, որ չխնայեն իրենց արդ ու զարդը „այդ արդար նահատակների համար“։ Հրամանատարի կինը ուղարկում է իր ստորագրեալին, նա էլ երկրորդին ու այսպէս բարձրագոյն դռնից սկսած իջել ու հասել է վերջին անկիւնը, մինչև քիւրդ խաթունի դուռը, որ շտապում է մաս հանել իր շապկից, գուլպայից, վերարկուից և եթէ կայ՝ դրամից։ Իսլամի կինը նուէրներ է տալիս և այն՝ ամենայն ջերմեռանդութեամբ։ Եթէ շուտով այդ ս ր բ ա զ ա ն ն ու է ր ն ե ր ի հրաւիրագրերն ու տոմսերը այցելեն նաև հայ էֆէնտիների ու աղաների տները, վա՜յ այդպիսի օրերին. . .

Պատմութիւնն էլ իր գործն է շարունակում, և կատարւում են զարմանալի բաներ։ Քիւրդն էլ է պատրաստւում իր գլխի ճարը տեսնելու, նա էլ հետևում է պատմութեան դասին։ Եւ այժմ նրանց մէջ աղա թէ հասարակ դասակարգ, ասում ու խօսում են. „Տեսնենք հայի վերջը ինչ կը լինի։ Այն ժամանակ մենք էլ կըսկսենք նրանց նման շարժուել“։ Թիւրքն էլ այն համոզմունքին է գալիս, որ ամէն ինչ փոխւում է։

Կարմիր սուլթանը „բարեհաճել“ է ներել ծրագրած նոր տուրքերի գանձումը, որ 5 ղուրուշից մինչև 700 ղուրուշ լինելու էր. դրա փոխարէն իր ամենահաւատարիմ և հպատակ ժողովրդին յայտնում է, որ հէնց այժմեանից վճարեն գալիք տարուայ տուրքերի մի բաժինը։ Կարիքը խիստ մեծ է և զգալի։ Սուլթանի հլու պաշտօնեաները տուրք հաւաքելուց՝ շունչ անգամ չեն կարող առնել. առնում են և ժողովուրդն էլ տալիս է, կաշառքն էլ հետը։ Այժմեանից ստիպուած է վճարել ոչխարի գլխահարկը, որպէս նոր տարուայ կանխավճար։ „Թող ժողովուրդը ժամանակից մի քիչ շուտ վճարէ, թող մի քիչ էլ օգնէ դավլաթին (պետութեան)—ինչ կը լինի“, ասում է թիւրք պաշտօնեան։ Եւ այսպէս օրից օր ժողովուրդը ընկճւում է նիւթապէս և նրա ապրելու միջոցը անցնում է կառավարութեան ձեռքը . .

Տխուր լուրերը արագութեամբ տարածւում են։ Նախապատրաստութիւններ են տեսնւում շուտով զէնքի կանչելու 12 ալայի (վաշտ) համիդիէներին. ո՞ւր պիտի գնան, յայտնի չէ. բոլոր աշիրէթների մէջ սկսել է դող։ Նրանք ասում են. „Ո՞ւր ենք գնալու, չգիտենք, արդեօք Մակեդոնիա, Րումելիա, Արաբիա թէ՞ Սասուն։ Երբեք տեղն էլ գնալ կը լինի, վերադառնալ չի լինիլ, վտանգաւոր է. ի՞նչ անենք, մե՞նք էլ թողնենք մեր ամէն մի բան ու հետևենք ֆէդայուն։ Տաճկի միտքն է մեզ կոտորել տալ. եկող գարունը ուրիշ գարուն է, վա՜յ մեր օրերին“։ Ատելութիւնը օրէցօր մտնում է քրդական բոլոր խաւերը։ Ինչպէս ասում են, մի քանի ցեղապետներ ուզում են մոռանալ անձնական թշնամութիւնները և միանալ իրար հետ, բայց, ո՛վ գիտէ, վայրենիների մէջ այնքան էլ շուտ չի մտնում ներումի և հաշտութեան գաղափարը։

Յայտնի Հիւսէյն փաշան պատրաստւում է յառաջանալ դէպի Բայազէդի շրջանը, աշխատում է ձեռք ձգել նոր նոր կալուածներ և տէր դառնալ այդ տեղերին էլ. հակառակ նրա ձգտումներին, ադամանցի ցեղապետները աշխատում են ամէն միջոցներով արգելք դառնալ նրա յառաջխաղացման։ Հետևանքը վատ պիտի լինի. ասում են, կարող է բացուել քրդական կռուի մի նոր դուռ։

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ

ՎԱՆ, 20 յունուար

Լրտեսների և վարձկան լրբերի թիւը զգալի կերպով աճել է քաղաքի մէջ։ Դաւաճանութեան ու մատնութեան առաքեալները իրենց շուրջն են հաւաքել բաւական մեծ բազմութիւն։ Այդ դաւաճանների մասին անցեալ տարիներում գրուած է այստեղից. դրանք մի քանի հոգի են. 1) Սէմէրճեան Յովհաննէս՝ նախկին անդամ կոմիտէի, այժմ անդամ՝ գաղտնի ոստիկանութեան, 2) Բարբարբաշեան Յակոբ՝ նախկին անդամ կոմիտէի, այժմ անդամ գաղտնի ոստիկանութեան, 3) Ջանջիկլըանեան Գալուստ, դա մի նորահարս երիտասարդ է, որ գարշելի ստորութեամբ, իր ընկեր Միհրան Թարկուլեանի հետ, մատնեց Վարդգէսին։ Կան և մի քանի կոմիսէրներ ու փօլիսներ, որոնք կազմել են, երկու սեռից, մի խումբ՝ լրտեսութեան ու մատնութեան։ Մի՛ զարմանաք, հայ-կին լրտես էլ կայ այստեղ, պոռնիկ և լրտես, շնորհիւ հայ կոմիսէրների և նախկին կոմիտէի անդամների։ Մատնիչների և լրտեսների աճումը պայմանաւորուած է կոմիսէրների ճարպիկութեամբ։ Նրանք նշմարում են նախ յեղափոխութեան աւելի մօտ եղող անձնաւորութեանց, յետոյ մեղադրում են նրանց ոեւէ չգործած յանցանքի մէջ, բայց իրենց բարեհաճութիւնը ու անհուն սէրը ապացուցանելու համար՝ միջնորդում են կառավարութեան առաջ, „երախտապարտ“ են թողնում։ Շատերն էլ չքաւորութիւնից են դիմում այդ արհեստին։ Դաւաճանների պարագլուխներից Յակոբ Բարբարբաշեանը դրամանենգութեան մէջ բռնւում է. Ադամ բէկը (ժանդարմների պետը), օգտուելով առիթից, մի կլորիկ գումար շորթելուց յետոյ՝ պայման է դնում, որ և ընդունելով՝ Բարբարբաշեանը փոխւում է յեղափոխականի ցնցոտին՝ հագնելով դաւաճանի ծիրանին։ Սէմէրճեանը ծախւում է կազմակերպութեան հրացանը և վախնալով յեղափոխականի դաշոյնից, անցնում է հակառակ կուսակցութեան՝ Ադամ բէկի կուսակցութեան կողմը։ Բոլորի կենսագրութիւնը ունի հա-

ժանմանութիւն. շարժառիթները երկու են՝ ստոր շահասիրութիւն և երկիւղ։ Բայց թող հասկանան այդ ազգադաւ ճիւաղները, որ դեռ կապրի կարմիր յեղափոխականը, որի սրատես աչքերից չի վրիպում ոչ էլ լիրբ արարք, ոչ էլ գարշելի, հրէշային գործողութիւն։ Իսկ ի՞նչ ասել այն երիտասարդութեան որ այսօր ինքզինք յեղափոխական է անուանում։ Եթէ երիտասարդութիւնը գիտակցութիւն, անձնազոհութիւն, ազնւութիւն ու գործելու, իր ապաբախտ սև հայրենիքին օգտակար լինելու բուռն ցանկութիւն ունենար, պիտի թողնէ՞ր նա, որ այսօր դաւաճանութեան և լրտեսութեան մի սև միտք անգամ սահէր իր ազգակից եղբօր գլխից, պիտի չբնաւէր այդ միտքը նրա ուղեղի մէջ։ Եթէ երիտասարդութիւնը գիտակցէր, պիտի թողնէ՞ր, որ այսօր մեր մաքուր ու անբիծ ընտանիքը պոռնկութեամբ ու դաւաճանութեամբ սևացնէր մեր մաքուր ճակատը. պիտի թողնէ՞ր, որ անարգել ասպարէզ առնէր ոչ էլ Սէմէրճեան, ոչ էլ Ադամ...

—

## ՍԱՀՄԱՆԱԳԼԽԻՑ, 6 ապրիլ

Գարաքիլիսէի մօտերքը Թիւրք զօրքերը սպանել են երկու պուլանըգցի գաղթականներ, որոնք գալիս էին Կովկասից։ Վերադարձին նրանց բռնում, բանտարկում են և երկու օր վերջ դէպի Կովկաս են վերադարձնում. ճանապարհին զինւորները հրացանով խփում են նրանց. մէկը իսկոյն մեռնում է և միւսը վիրաւոր փախչում է ու ապաստանում զիլանցի աշիրէթի Գ..րդ ալայի գայմագամ Սէլիմ փաշայի տունը, որը նրան յանձնում է կառավարութեան։ Երկու շաբաթ չափ տանջելուց յետոյ՝ նա էլ մեռնում է բանտի մէջ։

Նոյն միջոցին գարաքիլիսեցի Մարտօ Ղալարի տղուն ու փոթկայ Օհանի տղայ Միհրանին Կովկասից վերադառնալիս նոյնպէս բանտարկում են. մի մի ոսկի տուգանք առնելուց յետոյ դարձեալ վերադարձնում են դէպի Կովկաս. ասում են, որ նրանք էլ նախորդների նման սպանուել են։

Ուչքիլիսէի վանքի գիւղացիներից Պօղոս և Կոստանը Կովկասից վերադառնալու համար՝ բանտարկուած են Բայազէդի բանտում։ Նրանց տարան ռուսաց կառավարութեան յանձնելու, բայց վերջինը չ'ընդունեց, ուստի կրկին յետ վերադարձրին և այժմ Բայազէդի բանտումն են։ Պահանջում են մեծ տուգանք, որպէսզի բաց թողնեն։

Թիւրքաց զօրքերի յիսնապետ ֆէյզի էֆէնդին բանտարկեց Խումլիպուճախ գիւղացի Հովօ և Քօչօ, որոնք շրջակայ գիւղերը առևտրի և ամուսնական գործով էին գնացել. նրանց մեղադրում էր որ Կովկաս են գնացել։ Երկուսից 10 ոսկի առնելուց յետոյ միայն բաց թողեց։

Բայազէդի բանտում կան 23 հայ բանտարկեալներ որոնց մեծ մասը խաստուրցիներ են, քաղաքական յանցանքով բռնուած. երկուքը գարաքիլիսեցիներ են, մէկը բայազէդցի և երեքը վանքի շրջանի գիւղերից։ Անհիմն զրպարտութիւնների պատճառաւ բանտարկուած են և ամիսներով մնում են բանտում, առանց հարցուփորձի։

Հայ գիւղերում ապրող զինւորներն ու համիդիէները գիւղերը հսկելու պատրւակով շրջում են գիւղի մէջ և վա՜յ այն մարդուն որ դուրս կըգայ տնից։ Գիշերները իսկ տուն են մտնում և „սոված եմ“ ասելով՝ մի բան են ուզում. ինչ որ ցանկանում են՝ գործադրել են տալիս—դրացին տնից դուրս գալու իրաւունք չունի, ինչ որ էլ լինի։ Գարաքիլիսէի շրջանում համիդիականները սպանել են Յամաս գիւղացի Աւօյի Տօնօն, երեկոյեան ուշ ժամանակ տնից դուրս գալու պատճառով։ Սպանում և լուր են տալիս կառավարութեան, որ ֆէդայուն սպանել, և վարձատրւում են։

---

## ԵՐԵՒԱՆԻ ՅՈՅՑԻ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ

—

Այսօր, օգոստոսի 3-ին, լրացաւ ուղիղ մէկ տարի այն օրից, երբ հազարաւոր ժողովուրդը, ալեկոծ ծովի պէս յորձանքներ տալով՝ գնաց և զարկւեց Էջմիածնի միափող պարիսպներին, խանգարելով նրա դարաւոր նիրհը։

Խռնւեց ժողովուրդը մի թիզ հողի վրայ, որտեղ մարդիկ խմբւում էին աղօթելու, և փոխանակ աղօթքի, բողոք բարձրացրեց անիրաւութեան և բացարձակ յափշտակութեան դէմ, գրոհ տալով դէպի Էջմիածին, ստիպելով որ ոչ ոք, ոչ մի հոգևորական իրաւունք չունենայ աւազակային հրովարտակը օրինաւոր ճանաչել և նպաստել նրա իրագործման։

Գնում էին ժողովրդի բոլոր դասակարգերից, խառն ի խուռն, ցոյցի դրօշակ բարձրացրած. գնում էին բոլորը մի սիրտ, մի հոգի դարձած, մի գաղափարով բռնւած. գնում էին, կանգ չառնելով ոչ մի արգելքի դիմաց, և գնում էին որպէս հեղեղ, որը քանդում է իր ճանապարհի վրայ ամէն խոչընդոտ։

Եւ գնում էր ժողովուրդը, արհամարհելով ոստիկանութեան դիմադրութիւնը, պատռելով սարաժնիկների շղթան, յետ քշելով զօրքերի յարձակումը, լռեցնելով զալպերի խմբային որոտը, մի արտասովոր ոգևորութեամբ, մի վիթխարի մոլեգնութեամբ, որի նմանը շատ քիչ անգամ է վիճակւած տեսնել։

Բայց ի՞նչ էր ժողովրդի պահանջը։ Մի՞թէ եկեղեցական գումարների յափշտակութիւնը և կալուածների գրաւումը—նիւթական այդ սոսկ կորուստը—եկել էր աղմկելու հայ ժողովրդի խաղաղութիւնը։

Ո՛չ, այդ քիչ բան է...

Հայոց կաթողիկոսին դարձրին իրաւազուրկ, հայ հոգևորականութիւնից խլեցին շատ իրաւունքներ — հայը չբողոքեց։

Խափանեցին Հայոց Հրատարակչական ընկերութիւնը և մերկերին ու քաղցածներին խնամող Բարեգործական Ընկերութիւնը — հայը էլի չբողոքեց։

Մի անլսելի բարբարոսութեամբ փակեցին հարիւրաւոր հայ դպրոցներ և հազարաւոր մանուկներ փողոց շպրտեցին—հայը դարձեալ չբողոքեց։

Մի՞թէ, կրկնում ենք, նիւթական այդ սոսկ կորուստը եկել էր աղմկելու հայ ժողովրդի խաղաղութիւնը։

Ո՛չ—Նրա վրդովմունքի բողոքը այն սիստեմատիկ հալածանքի դէմ էր, որը ձգտում էր հայի անհատական, ազգային իրաւունքները խեղդելու, չէզոքացնելու։

Հայը վաղուց զգում էր մի սոսկալի հալածանք ազգային և ցեղական առանձնայատկութիւնների, լեզուի սովորութիւնների և կրօնական ուրոյն իրաւունքների դաւանանքների դէմ. Նա զգում էր մի տմարդի բռնութիւն իր անհատական ձգտումների, զգացմունքների և հոգեկան ուրոյն պահանջների վերաբերմամբ։ Նա պարզ տեսնում էր իր առաջ դրւած ռուսացման ստոր ծրա-

գիրը նիւթական զրկանքների միջոցով և մի առիթ էր փնտռում ցոյց տալու իր բռնակալին, որ ինքը բարոյապէս այնքան էլ մեռած չէր, որ նրա վերաբերմամբ կարելի լինէր ամէն տեսակ ոտնձգութիւններ անել և անպատիժ մնալ։

Առիթը ներկայացաւ. հրատարակեց Յունիսեան 12-ի՝ աւազակութիւն, կողոպուտ և եկեղեցիների դռները և կասսաները կոտրելու հրաման արձակող խայտառակ մանիֆեստը. ցնցեց հայ ժողովուրդը, խօսեց նրա մէջ ազգային իրաւունքների և անհատական ձգտումների բողոքի անբռնաբարելի ձայնը, և նա գլուխ բարձրացնելով ռուսաց ապուշ ցարի, նենգ Պլեվէների ու Գօլիցինների դէմ, համարձակօրէն յայտարարեց, որ նա կայ, նա կը մնայ որպէս մարդ, որպէս ազգ, թէկուզ կովկասի իւրաքանչիւր քարը իր արիւնով ներկուի։

Եւ այս խօսքերով հայը նետուեց ցոյցերի ասպարէզ. սպանուեց, սպանեց և կը շարունակէ սպանել, մինչև որ կը վերականգնէ իր բռնաբարուած իրաւունքները։

Ահա այդ կռուի սկզբնաւորութիւնը տուեց Երևանում անցեալ 1903 թ. օգոստոսի 5-ի հռչակաւոր ցոյցով, որի գեղեցիկ յիշողութիւնը մենք այս թռուցիկով նորոգում ենք մեր ժողովրդի մտածողութեան մէջ, որպէս մեծ օրուայ տարեդարձ։

Հ. Յ. Դաշնակ. Ռուսաստ. Կովկ. Կոմիտէ

# Թ Ե Ր Թ Օ Ն

## ՍԱՍՈՒՆԻ ՀԱՐՑԸ
## ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՊԱՐԼԱՄԵՆՏՈՒՄ

### ՅՈՒՆԻՍԻ 9-Ի ՆԻՍՏ

*(Պաշտօնական արձանագրութիւն)*

---

*(Շարունակ. № 8-ի)*

Պ. ԴԵԼԿԱՍԷ, ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐ.—Ես պարտաւորութիւն ունեմ ծանօթացնել պատգամաւորական ժողովը այն տեղեկագրի հետ, որ ստացել եմ երկուշաբթի երեկոյեան Կ. Պոլսի մեր դեսպանից։ Ահա այդ տեղեկագիրը, որ կրում է մայիս 31 թիւը։

Այն տեղեկութիւններից, որոնք հասել են դեսպանատուն՝ կամ Վանի մեր հիւպատոսի, կամ Էրզրումի փոխ-հիւպատոսութեան միջոցով, կամ թէ...—ես թոյլտւութիւն եմ խնդրում լռութեամբ անցնել անունը, սա մի օտարերկրացի է, որին չեմ ուզում մատնել մարդկանց զայրոյթին...—այդ տեղեկութիւններից հետևում է, նախ և առաջ, որ ոչ մի նմանութիւն չէ կարելի սահմանել ներկայ և 1904-ի անցքերի միջև։ Զարիքը չունի այս անգամ ընդհանուր բնաւորութիւն և ըստ երևոյթին առաջացել է մի շարք տեղական միջադէպերից։ Ստոյգ է, որ զօրքի ու հայերի մէջ տեղի են ունեցել յաճախակի կռիւներ և որ ճնշումը շատ խիստ է եղել։ Որոշ թիւ գիւղեր հրդեհուել են, այն է՝ Շէնըկ, Սէմալ և Ալիանք, որոնց տիրել են զօրքերը, բազմաթիւ կռիւներից յետոյ։ Բոլոր երեք գիւղը այրուել ու մոխիր են վերածուել։ Նոյնը եղել է և Աէլիէկուզանում, որը լցուած է եղել երկու սեռի ապստամբներով։ Նա գրաւուել է յուսահատ դիմադրութիւնից յետոյ և բոլորովին աւերուել է։ Նրա անկումն է, որ վերջ է դրել Սասնոյ հայերի զինուած դիմադրութեան։ Սակայն և այնպէս, մինչև Կ. Պոլիս հասած տեղեկութիւնները անցքերի մասին անստուգութեան բնոյթն ունեին, այնպէս որ անհնարին է տակաւին նոյնիսկ մօտաւորապէս որոշել աւերուած գիւղերի քանակը։ Մինչդեռ մեծ վեզիրը, որը սակայն շահ չունի մեծացնելու իրողութիւնները, ընդունում է, որ 25 գիւղ հրդեհուել են"—դա ձեր տուած թիւն է, սիրելի պաշտօնակից—տասներկու գիւղը՝ զուտ հայ-լուսաւորչական ազգաբնակութեամբ և տասներեքը՝ խառն ազգաբնակութեամբ,—պարոն... (ես միշտ լռում եմ անունը), խօսում է միայն 15 աւերուած գիւղերի մասին։ Ճիշդ է, նա երկիւղ է կրում, որ նոյն վիճակին կը մատնուեն ուրիշ գիւղեր ևս, Խիանի գաւառի մէջ, ուր գործում էին Սալեհ փաշայի զօրքերը։

Մայիսի 6-ի ու 7-ի օրերում, 600 փախստականներ (կին, երեխայ ու ծերեր), Սասունի աւերուած գիւղերից, եկան Մուշ, շրջապատուած զինուորներով։ Քաղաքը լի է այդ փախստականներով, որոնք գնում են ամէն տեղ, ողորմութիւն խնդրելով. և այնտեղ ծանուցանում են նոր հայ խմբումների գալուստը Սասունից. —զօրքը տէր դառնալով լեռան՝ քշում է նրանց դէպի Մուշ։

Այդ անցքերի միջոցին եղած զոհերի թիւն ես չէ կարող որոշել։ Խօսում էին հազարների մասին։ Ես կարծում եմ, որ դա չափազանցութիւն է։ Պարոն...-ը ոչ մի չափ չէ որոշում և միայն հաստատում է, որ Մուշում ապաստանած հայերի մէջ երևում են միմիայն ծերեր, երեխաներ կամ կանայք։ Նա հարց է տալիս ուրեմն՝ ի՞նչ են եղել երիտասարդները, զէնք կրելու ընդունակ տղամարդիկ։ Ոչ մի ապացոյց չկայ, թէ նրանք բոլորը սպանուած լինեն։ Նրանք կարող են փախած լինել լեռան շաւիղներով, փորձելով հասնել սահմանին. արդէն լուր կայ, թէ նրանցից մի քանիսը վերադարձել են իրենց կաղաները։

Զարիքը մեծ է, չէ կարելի վիճել, բայց չպէտք է չափազանցնել և ոչ էլ նոյնացնել ներկայ անցքերը 1894-ի անցքերին։ (Ընդմիջումներ ծայր. ձախակողմում)։ Տարակոյս չկայ, որ ապստամբութեան ճնշումը ունեցել է իբր հետևանք՝ կոտորումը մեծ թւով ապստամբների, նաև խաղաղ գիւղացիների, որոնք ապրում էին ֆէդայիների բնակած գիւղերում։

Ինչ վերաբերում է քրդերի գալուն՝ դեռ պարզ կերպով չէ կարելի բացատրել, ի՞նչ տեղական հանգամանքների շնորհիւ նրանք դիւրութիւն ունէին բաւական յաճախ նախորդելու զօրքերին, երբեմն էլ յաջորդելու նրանց, որովհետև ես գիտեմ, և իմ պաշտօնակիցների մէջ ուրիշները ևս գիտեն, որ մեծ վեզիրը իր կողմից ուղղել է վիլայէթի կառավարչին ամենաորոշ ու ամենակտրուկ հրահանգներ, որ գործողութիւնները սահմանափակուեն միմիայն կանոնաւոր զօրքի միջամտութեամբ, առանց ոևէ ուրիշ տարրի։

Ձեր հրահանգների համեմատ՝ ես հրաման եմ տուել Վանի մեր հիւպատոսին՝ մնալ Մուշում Ռուսաստանի և Անգլիայի իր պաշտօնակիցների հետ, մինչև այն օրը, երբ Սասունի մէջ կատարեալ հանգստութիւն կը տիրէ։

Չէ երևում, թէ զինուորական նոր գործողութիւն պիտի տեղի ունենայ։ Զօրքերը մեծ մասամբ հեռացել են երկրից և հիւպատոսների ներկայութիւնը սկսում է ներշնչել բնակիչներին որոշ վստահութիւն։ Օգտակար է, վերջապէս, որ մեր գործակալները լրացնեն տեղնուտեղը իրենց

քննութիւնը կատարուած իրողութիւնների մասին, որպէս վերջոյ մենք կարողանայինք միջամտել թիւրք կառավարութեան առաջ՝ խնդրի լիակատար ծանօթութեամբ“:

Ահա պատմութիւնը, որ ներկայացնում է մեզ մեր դեսպանը: Ես պէտք է ասեմ, որ նրա տուած տեղեկութիւնները համաձայնւում են այն տեղեկութիւնների հետ, որոնք ստացուած են Լոնդոնում ու Պետերբուրգում:

Յարգելի պ. Պրէսանսէ յիշեցնում էր ձեզ այս րոպէիս այն շատ կարճատեւ վիճաբանութիւնը, որ տեղի է ունեցել երկու օր առաջ անգլիական համայնքների ժողովում: Թոյլ տուէք ինձ առաջ բերել յարգելի կոմս Պերսիի արած յայտարարութեան երեք-չորս էական տողերը. „Համաձայն այն տեղեկութիւնների, որ ստացել է Նորին Մեծութեան կառավարութիւնը՝ 12 գիւղ այրուել կամ կործանուել են Մուշի սանջակում և 13 գիւղ Գենջ սանջակում. սակայն պարզ չէ երևում, ով է աւերողը — ապստամբնե՞րը, թէ թիւրքաց զօրքերը: Կարծես թէ հիմքեր կան յուսալու, որ մեռածների թիւը համեմատաբար թոյլ է... Տարակոյս չկայ, որ հիւպատոսների ներկայութիւնը բարերար ներգործութիւն է ունեցել“...

Ես աւելացնում եմ, պարոններ, որ Պետերբուրգ հասած տեղեկագիրները նոյնպէս հաստատում են, որ իրողութիւնները խիստ չափազանցուել են:

Սակայն, եթէ անգամ հասցնենք փոքրիկ չափերի, այնուամենայնիւ, ողբալի է, որ այդ տեսակ իրողութիւններ կարող են առաջ գալ: (Շատ լաւ, շատ լաւ):

Եթէ չէ կարելի մերժել Դրան իրաւունքը ճնշելու ապստամբութիւնը, ապա կարելի է շատ իրաւացի կերպով յանդիմանել նրան, որ չնայած իր բացորոշ յանձնառութիւններին՝ նա պահպանում է մի այնպիսի վարչութիւն, ուր ապստամբութիւնը հանդիսանում է միակ ապաստանը յուսահատուած, կատաղած ազգաբնակութեան համար: (Ծափահարութիւններ):

Եթէ ճիշդ է, որ քրդերը ամենևին բանի տեղ չեն դնում թիւրքաց իշխանութիւնների հրամանները, դրա պատճառը այն է՝ որ շատ յաճախ նրանք կարողացել են հաւատալ, որ նրանց ըմբոստութիւնը և նոյնիսկ նրանց վայրագութիւնները հայերի նկատմամբ բնաւ անախորժ չէին լինի թիւրքաց իշխանութիւններին: (Նոր ծափահարութիւններ):

Եւ թէպէտ անխուսափելի է, որ մի ապստամբութեան ճնշման ընթացքում հարուածները մոլորուելով կ'ընկնեն անմեղ մարդկանց վրայ, սակայն անմեղ զոհերի թիւը չափազանց պարզ վկայում է, որ զինուորները շատ էլ չեն նեղւում ընտրութեան մէջ: (Շատ լաւ, շատ լաւ):

Բաւական չէ արդարանալու համար առաջ բերել տրուած հրամանները: Պէտք է պարզ կերպով հաստատել, որ այդ հրամանները անկեղծ են և որ նրանց անկեղծութեանը հաւատում են ամենից առաջ նրանք, որոնք այդ հրամանները գործադրելու յանձնարարութիւնն ունին: (Ծափահարութիւններ բազմաթիւ նստարանների վրայ):

Սասունի դէպքերը պէտք է ալէկոծէին շրջակայ վայրերը: Մեզ տեղեկացրել են, որ կայ խռովութիւն Բիթլիզում և շատ խիստ երկիւղ Մուշում: Ահա թէ ինչու ես անմիջապէս հրաւիրեցի Վանի մեր հիւպատոսին՝ ճանապարհուել դէպի Մուշ և հրահանգեցի նրան մնալ այնտեղ այնքան ժամանակ, որքան ժամանակ իր ներկայութիւնն ու աչալուրջ հսկողութիւնը անհրաժեշտ կը լինեն փախստականների հովանաւորութեան համար:

Միւս կողմից՝ Կ. Պոլսի մեր դեսպանը հրահանգ է առել՝ անյապաղ համաձայնութեան գալու իր այն պաշտօնակիցների հետ, որոնք լիազօրութիւն ունեն այնտեղ — ես գիտեմ, որ կան այդպիսիք — և ազդու կերպով դիմում անել Դրան, որ ապստամբութեան ճնշումը վերջացած է, որ պէտք է ոչ թէ շարունակել զինուորական գործողութիւնները, այլ ընդհակառակը, օգնել անմեղ զոհերին և որ քանի դեռ ազգաբնակութիւնը կատարելապէս չհանդստանայ, մեր գործակալները պիտի մնան խռովութեան վայրերում, որ նրանք անընդհատ պիտի ղրկեն մեզ տեղեկութիւններ և պիտի միջամտեն թիւրք կառավարութեան առաջ, որ վերջապէս, Դուռը, հրահանգուած այնքան փորձերից, հանդէպ այն միջամտութեան, որ նա անհրաժեշտ է կացուցել Մակեդոնիայում, պէտք է, հենց իր շահի տեսակէտից, յոյս չտածէ, թէ իր պատասխանատուութիւնը բոլոր ուրիշ տեղերում ոչ այլ ինչ է, եթէ ոչ լոկ խօսք:

Խնդրում եմ պատգամաւորական ժողովին՝ հաւատալ, որ կառավարութիւնը չպիտի դադարէ իր պարտաւորութիւնը կատարել, իր բովանդակ պարտաւորութիւնը: (Բուռն ծափահարութիւններ):

Պ. ՆԱԽԱԳԱՀ. — Խօսքը պ. Պրէսանսէին է:

ՖՐԱՆՍԻՍ ԴԸ ՊՐԷՍԱՆՍԷ. — Պարոններ, մեր արտաքին գործերի մինիստրի յայտնութիւնը որոշ, շատ թոյլ չափով միայն գոհացնում տւին հեղինակին այն հարցապնդումի, որ արւեց ամբիոնից:

Սակայն, մեր առջև կարդալով Կ. Պոլսի մեր դեսպանի ղրկած տեղեկագիրը, ինձ թւում է, թէ պ. մինիստրը բաւականաչափ հաշւի չէ առնում մէկ հանգամանք. այն՝ որ ներկայումս, թէ Մուշի դաշտում և թէ Սասունի շրջանում կատարւող իրողութիւնները, ինչպէս նաև այն բոլորը, որ տեղի ունի Դրան դիւանագիտական յարաբերութիւնների մէջ՝ Եւրոպայի ներկայացուցիչների հետ, — որ այդ բոլորը ստրկօրէն վերարտադրում է 1894-ի ու 95-ի մէջ անցած իրողութիւնները:

Փորձեցին — ինչպէս ես նախատեսել էի — սահմանափակել այն կսկծալի դէպքերի ծաւալը, որոնք մի քանի շաբաթից ի վեր տեղի են ունեցել Մուշում և Սասունում: Փորձեցին — և ես այդ գիտէի առաջուց — ապացուցանել, որ այդ անցքերի մեղը ընկնում է իրենց իսկ հայերի վրայ և ֆէդայիների վրայ: Այս առթիւ ես շնորհակալութիւն եմ յայտնում պ. մինիստրին, որ նա բարեհաճեց յայտարարել ամբիոնից, որ հայերի, ինչպէս և ուրիշ ճնշուած ժողովուրդների համար՝ կան այնպիսի պարագաներ, ուր ապստամբութիւնը ամենասուրբն է և առաջնագոյնը բոլոր պարտաւորութիւններից: (Ծափահարութիւններ):

Գոհունակութեամբ ընդունելով հանդերձ մեզի արւած յայտնութիւնները և մասնաւորապէս խոստումը՝ պահպանել այն տեղերում Ֆրանսիայի, ինչպէս նաև ուրիշ

պետութիւնների հիւպատոսներին, որոնք մի քանի տարուց ի վեր ստեղծել են պաշտօնատեղեր այդ գաւառներում,— ես այնուամենայնիւ, ինչպէս արդէն ասացի, չեմ կարող անտես առնել, որ եթէ այդ հիւպատոսները պիտի մնան անզէն, անգործ ու անշարժ, եթէ նրանք միմիայն պարզապէս պիտի արձանագրեն իրենց աչքերի առաջ կատարւող իրողութիւնները — ապա դրանից ոչինչ չպիտի շահի հայ ազգաբնակութիւնը, դա կը լինի մի տեսակ լուռ սրբագործումն ոճիրների։ Հարկաւոր է մէկ բան՝ պաշտօնանկ անել տալ անմիջապէս — որպիսի՜ հեգնութիւն այս բառի մէջ — Ջէքի փաշային ու Ֆէրիդ բէյին, մի բան, որ պահանջել են արդէն 1894-ին և որ չէ իրագործւել այն ժամանակից ի վեր։

Մինչև մենք չ՚իրագործենք այդ պահանջը, մինչև մենք պաշտօնից զրկել չտանք արիւնի մարդկանց, որոնք գլուխ են կանգնած զօրքին ու վարչութեանը այդ դժբախտ վայրում, միևնոյն ոճիրները կրկնւելու են՝ քրօնիքական կամ սուր ձևի տակ, ինչ որ էլ անէք և ինչ որ էլ ասէք։

Բաւական չէ նոյնպէս տարէց-տարի, ամսէ-ամիս, շաբաթէ-շաբաթ անել գերազանցապէս անօգուտ ցոյցեր սուլթանին, որը թողնում է նրանց առանց ուշադրութեան. անհրաժեշտ է մեզ՝ կանգնել Բերլինի դաշնագրի 61-րդ յօդւածի իրաւական անխորտակելի հողի վրայ և պահանջել նրա գործադրութիւնը 26 տարի յետոյ։ Դուք դրա համար ունիք միջոցներ ձեր ձեռքի տակ։ Դուք կարողացաք, մի ժամանակ, յաղթահարել օսմանեան կառավարութեան ընդդիմութիւնները և կարողացաք ստիպել նրան համակերպել ձեր ցանկութիւններին՝ անսահմանօրէն նւազ ծանրակշիռ մի գործի մէջ։ Ես չեմ կարող ընդունել, ես չեմ ուզում ընդունել, որ Ֆրանսիան կարող է շարժման մէջ դնել իր նաւատորմը և և ծաւալել ու նպատակին հասցնել իր կռիւը՝ միմիայն Տուբինիների ու Լօրանդօների համար։ (Ծափահարութիւններ ծայր. ձախակողմում եւ աջակողմում)։

## ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

* * *

Առաջ ենք բերում քաղւածաբար Frankfurter Zeitung-ի մի ընդարձակ խմբագրականը՝ նւիրւած հայկական շարժման և հայերի դրութեան.

„Տաճիկները, որ արդէն յաճախ քօղարկում են եւրոպական Թիւրքիայի մէջ կատարւող անցքերը — որպէս զի արևմտեան Եւրոպայում չիմանան ճշմարտութիւնը — որքա՜ն աւելի յաճախ անում են այդ՝ ասիական Թիւրքիայի անցքերի վերաբերմամբ, մանաւանդ այն անցքերի, որոնք տեղի են ունենում Հ ա յ ա ս տ ա ն ի լեռներում։ Արդէն երկար ժամանակից իվեր գալիս են այնտեղից լուրեր յեղափոխական շարժումների մասին, և մենք ինքներս շատ անգամ հրատարակել ենք տեղեկութիւններ մասնակի կռիւների մասին, այնուամենայնիւ դեռ ևս չկայ անցքերի մի ամբողջացած տեսութիւն։ Էրզրումի մէջ հաստատւած Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի հիւպատոսները այցելել են Մուշը, սակայն ռուսական, ֆրանսիական և անգլիական կառավարութիւնները մինչև օրս չեն հրատարակել իրենց տեղեկագրերը։ Բայց քանի որ — ինչպէս հաղորդում է Կ. Պօլսի մեր իրազեկ թղթակիցը — այնտեղի լուսատեղեակ շրջաններում սպասում են, սեպտեմբեր ամսում, Հայաստանի մէջ մի աւելի մեծ յեղափոխական շարժում, և քանի որ թիւրք կառավարութիւնը դիմում է զինւորական նախազգուշական միջոցների՝ ուստի դիւանագիտութիւնը շուտով պիտի թողնէ իր ձեռնպահութիւնը և արհրաժեշտաբար պիտի զբաղւէ այն խնդրով, որը մակեդօնականից նւազ կարևոր չէ։

„Հայերի պահանջածը ոչ այլ ինչ է, եթէ ոչ այն, ինչ նրանց խոստացւած է 26 տարի առաջ Բերլինի դաշնագիրը ստորագրող պետութիւններից,— մի տեսակ ինքնավարութիւն Տաճկաստանի հայկական նահանգների համար։

„Այն ժամանակից, երբ հայերը՝ յուսահատւած, որ ոչ ոք չէ ուզում գոհացում տալ իրենց գանգատներին՝ մինչև իսկ Կ. Պօլսի մէջ դիմեցին բռնի գործողութիւնների,— այն օրից իվեր Աբդիւլ Համիդը անձնականապէս մի անյաղթելի գարշանք է զգացել դէպի հայերը, և նրա խորհրդատուները չէին վարանի նոր փորձի առաջ՝ հայկական վտանգը վերստին հեռացնելու արեան գետերով։ Եւրոպական դիւանագիտութիւնը ծանր պատասխանատւութիւն կը բարդէր իր վրայ, եթէ Բերլինի դաշնագրով ընդունւած յանձնառութիւնները ի կատար չ՚ածէր և լոկ թիւրքաց կառավարութեանը թողնէր՝ սովորական գազանային ձևով վերջ դնելու հայերի ձըգտումին՝ դէպի մի լաւագոյն վարչութիւն։

„Հայերի իղձերն ու պահանջները անիրաւացի չեն դառնում նրանով, որ նրանց իրագործման համար աշխատում է մի յեղափոխական կազմակերպութիւն, քանի որ բուն երկրում հայերը հնարաւորութիւն չունեն՝ իրենց ցանկութիւններին արտայայտութիւն տալու։ Այդ կազմակերպութիւնն է Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը, որի կենտրոնական օրգանը „Դրօշակ“ անունով լոյս է տեսնում Ժընևում և որի ներկայացուցիչները գործում են ոչ միայն Տաճկահայաստանում, այլև Կովկասում, Պարսկաստանում, նաև Ամերիկայում, Եգիպտոսում, Բալկանեան երկրներում ապրող հայերի մէջ։ „Յեղափոխական Դաշնակցութիւնը“ մեծ ժողովրդականութիւն է վաստակել իր անխոնջ գործունէութեամբ, որով նա տասնեհինգ տարուց իվեր քրդերի և թիւրք պաշտօնեաների մշտական սպառնալիքներին ենթակայ հայերին զէնք է մատակարարել և փորձել է պետութիւնների միջամտութիւնը առաջ բերել՝ խոստացւած ռեֆորմները մտցնելու նպատակով։ Երկրներում կազմակերպութիւնը կենտրոնացրել է իր ուժերը գլխաւորապէս Սասունում, որը դիտւում է իբրև միջնաբերդ Տաճկահայաստանի։ Այդ հանգամանքը պարզում է, թէ ինչու հայերը այնքան յամառութեամբ ձգտում են պաշտպանել այն լեռնավայրը թիւրք կառավարութեան դէմ, որը շարունակ փորձեր է արել այն լեռնոտ ու կիսանկախ շրջանում՝ զօրանոցներ շինել։ Այնտեղ է, որ երեք տարուց իվեր՝ բանակ էր հաստատել շատ յիշատակւած Անդրանիկը, „Դաշնակցութեան“ գլխաւոր ներկայացուցիչը։ Սակայն նրա զօրքը այնքան ուժեղ չէ, որ յարձակողական դիրք բռնէ, բայց և այնպէս նա շատ անգամ մեծ աջողութեամբ յետ է մղել թիւրքաց զօրքերի յարձակումները։ Նա, իհարկէ, չկարողացաւ արգելել, որ Ջէքի փաշայի առաջնորդութեամբ՝ թիւրք զինւորները միացած աւազակաբարոյ քրդերի հետ՝ գահավիժւէին անզէն հայերի,— կանանց, երեխաների ու ծերերի վրայ և կոտորէին։ Դա եղաւ ապրիլում։

„Այնուհետև դարձեալ բազմաթիւ ընդհարումներ

առաջացան, բայց թւում է, թէ զինւորները այլեւս առիթ չունեն վայրագութիւններ գործելու։ Հայերը Մուշում ներկայացրել են Ֆրանսիայի, Ռուսաստանի եւ Անգլիայի հիւպատոսներին այն հիմնական պահանջները, որոնց իրագործումը պիտի խաղաղացնէր երկիրը։ Հիւպատոսները ուղարկել են այդ ռէֆօրմների առաջարկները Կ. Պոլսի դեսպաններին։

„Չպիտի կարողանան պնդել, թէ այդ ցանկութիւնները անիրաւացի են. նրանցից մի քանիսը, օրինակ նրանք, որոնք վերաբերում են երկրի մէջ հսկողներ նշանակելուն, գաղթականների վերադարձին, եւրոպական հսկողութեան — համապատասխանում են նոյնիսկ այն պահանջներին, որ պետութիւնները դրել են Մակեդոնիայի նկատմամբ։

„Բայց եւ այնպէս հայերը քիչ յոյս ունեն շուտով իրագործուած տեսնելու իրենց ցանկութիւնները։ Անգլիան, Ֆրանսիան եւ Իտալիան հաստատապէս հակուած կը լինէին պնդել հայերի առաջարկած ռէֆօրմների վրայ, սակայն Ռուսաստանը, որ երբէք լրջօրէն չէ ցանկացել ամրացնել թիւրքական տիրապետութիւնը ռէֆօրմների իրագործումով — այսօր բացարձակապէս թշնամական դիրք ունի դէպի հայերը։ Ռուս կառավարութիւնը ոչ միայն իր երկրի մէջ է կատաղի կռիւ մղում հայերի դէմ, այլ նա մինչեւ իսկ, — ինչպէս հաղորդեցինք մի քանի օր առաջ — թիւրքերին օգնութեան է հասցրել ռուս զինւորներին՝ մի հայ ապստամբական խումբ ցրւելու միջոցին։

„Չնայած այդ բոլորին, չպէտք է զարմանալ, եթէ հայերը դարձեալ եւ դարձեալ փորձեր անեն՝ եւրոպական պետութիւնների միջամտութիւնը առաջ բերելու։ Պայմանները Հայաստանի մէջ ուղղակի անտանելի են, եւ Մակեդոնիայի օրինակը կարող է միայն խրախուսիչ ներգործութիւն ունենալ հայերի վրայ"։

* * *

Իր սեպտեմբեր 10 թւին մէջ՝ Temps հայկական հարցի մասին խմբագրական մ՚ես կը նուիրէ, որմէ առաջ կը բերենք հետեւեալը.

„Եւրոպան՝ խորասուզւած Ծայրագոյն-Արեւելեան պատերազմի մտահոգութեան մէջ՝ չթուիր ունենալ պէտք եղած ազդեցութիւնն ու մտքի ազատութիւնը՝ ուսումնասիրելու համար հարցեր, որոնք աւելի հին ու վայրկեանէ վայրկեան սպառնական դառնալու բնոյթն ունին։ Ան կը ձգէ որ դէպքերը անցնին. կարծես արեւմտեան դիւանագիտութիւնը ձեռք քաշած է թէ մակեդոնական խորունկ խառնակութիւններէ եւ թէ հայկական սա ահռելի հարցէն, որ ուժգնօրէն կը ձգտի եղեռնական կռուի մը բնոյթը վերստանալու։

„Այս վերջինին նկատմամբ սպառնալից ազդարարութիւններ շատ ու շատ կրկնուած են։ Վերջին յունիս ամսուան մէջ կառավարութիւններու եւ ժողովուրդներու պաշտօնական ուշադրութիւնը հրաւիրուած էր ֆրանսական խորհրդարանին մէջ հարցապնդումով մը՝ Սասունի կոտորածներու վերսկսումի մասին։

„Արտաքին գործերու նախարարը՝ Զէքի փաշայի եւ Ֆէրիդ բէկի զոհերու մասին տրուած որոշ, ճշգրիտ եւ վաւերական պատմութեան պատասխանելով՝ չարիքի գոյութիւնը ճանչցած էր։ Ան յայտարարած էր դիմադրութեան օրինաւորութիւնը ազգի մը համար, որ մեռնիլ չուզեր։ Ան խոստացած էր վերջապէս ոչինչ խնայել ո՛չ միայն անմեղ արեան թափումը կանխելու ու կանգնեցնելու, այլ նաեւ ապահովելու դժբաղդ ժողովուրդի մը ընկերական կեանքի տարրական երաշխիքը, բարենորոգումներու միջոցաւ"։

Կիսապաշտօնական օրգանը անգամ եւս վեր հանելով պ. Տէլքասէին ջանքերը, որոնց մասին ամէն տեղ յարգանքով խօսուեցաւ հայ դատին ներկայացուցիչներու կողմէն, նոյնպէս կը շեշտէ ցարդ ձեռք առնուած միջոցներուն անբաւականութիւնը.

„Մարդկութեան բարեկամներու յուսախաբութիւնները չեն որ ծայրայեղ են։ Անշուշտ անոնք չեն հրաժարած եւ երբէք չպիտի հրաժարին Բէրլինի դաշնագրութեան 61-րդ յօդուածին իրենց համար հաստատած իրաւունքներէն։ Անշուշտ ձեռք չեն քաշած եւ չպիտի քաշեն այն իրաւունքներէն որ 1895-ի Մայիսեան յիշատակագիրը ստեղծեր է իրենց համար՝ զայն ստորագրող պետութիւններու վրայ"։

Շարունակելով իր տեսութիւնները 8 տարիէ ի վեր տէրութեանց բռնած ընթացքի մասին, որ կայացած է քառորդ դարէ ի վեր միմիայն պահանջելու մէջ սուլթանէն այն միջոցները, զորոնք նոյն ինքն սուլթանը քանիցս հանդիսաւորապէս խոստացեր եւ գործադրութիւնը ընդուներ է, եւ այն դիրքի նկատմամբ, որ սուլթանը բռնեց Սասունի վերջին դէպքերու առթիւ՝ Temps կը յաւելու.

„Այսօր չարագուշակ լուրեր շրջիլ սկսած են։ Կ. Պոլիս ապստամբութեան մասին կը խօսի։ Ռուսական Հայաստանի սահմանագլխին վրայ դժբաղդ հայերու երկու կրակի մէջ առնուած ըլլալը տեսնուած է։ Անխնայ ճնշում մը կը պատրաստուի։ Եւրոպա գիտէ թէ ինչ կը նշանակէ ասիկա։ Ան կրկին պիտի տեսնէ Անատոլուի սարսափները՝ եթէ հասարակական կարծիքը չվրդովուի ու լռէ։

„Զէնք կրելու վիճակին մէջ եղող հայերը իրենց համար ոչինչ չեն պահանջեր։ Անոնք որոշեր են ներշնչուելու օրինակէն այն բոլոր ազգերուն, որոնք իրենց ազատութիւնը եւ իրենց կեանքը ձեռք անցուցին։

„Ինչ որ կը պահանջեն՝ սա է, որ իրենց կիներն ու երեխաները համիտիէներու ձեռքը նախաղ քաւութեան չըլլան եւ անոնց հայրերուն ու ամուսիններուն արարքները անոնք չքաւեն։

„Այս պահանջի մէջ ոչ մէկ ծայրայեղութիւն կայ։ Ասիկա ազատութեան պատերազմի մը մէջ պատերազմական օրէնքին գործադրութիւնն է։

„Ներելի է յուսալ, թէ Եւրոպան, որ 96-ի կոտորածներուն եթէ ոչ անկարեկիր՝ գէթ իբր անգործ վկայ մը ներկայ գտնուած ըլլալուն համար, իր շահերուն, ինչպէս նաեւ խղճին մէջ այնքան տուժեց, պիտի ուզէ միեւնոյն յանցանքը կրկնած ըլլալու պատասխանատուութիւնը խնայել իրեն՝ սահման մը դնելով դահիճներու եռանդին եւ թէ վերջապէս մատուցանելով անհամեմատ ծառայութիւն մը Հայաստանին, մարդկութեան եւ նոյնիսկ Թիւրքիային, կարգադրելով արդարութեան, դաշնագիրներու եւ ընդհանուր օգտին համաձայն խնդիր մը, որ անդադրում կըսպառնայ թէ՛ հարստահարեալներու, թէ՛ հարստահարողներու եւ նոյնիսկ հանդիսատեսներու միանգամայն"։

# ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

## ՎԱՂԱՐՇԱԿ ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ

(ԿԱՅԾԱԿ)



(„ԴԺՈԽՔ" ՁԻԱՒՈՐ ԽՄԲԻ ԱՌԱՋՆՈՐԴ)

Մշեցի էր, ծնուած 1875-ին։ Տասնումէկ տարեկան հասակում Թաղական դպրոցն աւարտելով, նա ուղարկւում է Միացեալ Ընկ. Մշոյ Ներսէսեան վարժարանը, ուր ցոյց է տալիս մեծ սէր դէպի ուսումը, իր ընդունակութեամբ սիրւում է ուսուցիչներից և աւարտումին արժանանում է ոսկէ խաչ մրցանակի։ Բայց աչհա տարիներ անցնելով՝ մի ուրիշ սէր գալիս է բռնելու նրա ամբողջ էութիւնը,— զ է ն ք ի ս է ր ը։ Ամէն գարնան հրացանը ձեռին՝ նա մի քանի անգամ պտոյտի էր գնում լեռները, որսում էր, կամ վարժութիւններ էր անում։ Այդ հասակում արդէն ուժեղ, յաղթանդամ Վաղարշակը մի քանի անգամ ընդհարումներ է ունենում քըրդերի ու Թիւրքերի հետ։ Մի անգամ ինքը միայնակ կռւում է ութ քրդերի դէմ. երեքի գլուխն է պատռում, մէկի թեւն է կտրում։ Քրդերը ատում էին նրան և շարունակ սպառնում։

Մի օր որսորդութեան միջոցին էր, որ մեր քաջը պատահմամբ ծանօթացաւ Արաբօյի ընկեր՝ ալիզռնանցի Լեւոնի հետ։ Վերջինս ներշնչեց նրան հայրենիքի թըշնամիների դէմ կռուելու գաղափարը, որ այն ժամանակ փոքրաթիւ անհատների սեփականութիւն էր միայն։ Վաղարշակի շուրջը ամէն ինչ դեռ մրափում էր և անգամ իր ուսուցիչները բացարձակապէս ընդդիմանում էին զէնք կրելու նրա սովորութեան։ Մի օր Առաքելոց վանքից վերադարձին, հանդիպելով իր դասատուներից երկուսին, փորձում է սպանել նրանց,— ընկերը արգելք է լինում։ 1892-ին աւարտում է դպրոցը և աւելի ազատ է զգում իրեն։ Նոյն տարւայ նոյեմբերին, եղբօր հետ միասին ուխտի են գնում Սբ. Աղբիւրիկ վանքը, Խաս գիւղի ուխտաւորների հետ։ Գիւղից 2-3 ժամ հեռու, անտառը մտած պահուն, յանկարծ լոյս ընկաւ խումբեցի Բուզայ անուն յայտնի աւազակ քիւրդը, իր երկու ծառաներով։ Ժողովուրդը սոսկումից ուզեց անմիջապէս ետ դառնալ, այնքա՜ն քրդի անունը սարսափ էր տարածել ամէն տեղ։ Տեսարանը տխուր և վրդովեցուցիչ էր.— հարիւրաւոր մարդիկ սոսկում էին երեքի առաջ։ Վաղարշակը չկարողացաւ համբերել և երկու ընկերներով դիմեց դէպի քրդերը, որոնք այդ տեսնելով՝ փոխեցին ճանապարհը։ Բայց նկատելով, որ զինուած հայերը սպառնական հետեւում են իրենց, քիւրդ աւազակը, գէն ձգելով հրացանն ու գըլխարկը, եկաւ յարգանքով բարեւեց տղաներին, նստեց նրանց հետ, „բարեկամացաւ"։ Ուխտաւորների բազմութիւնը շւարած մնաց այդ անսովոր տեսարանի առաջ... Քիւրդը ճանապարհ գրեց նրանց մինչև վանքը, նոյնիսկ հայերի պահանջի վրայ՝ յետ բերեց մի մշեցի հայից նոր կողոպտած իրեղէնները։ Զէնքի հրաշագործ ազդեցութիւնն էր...

1893-ին Տամատեանի ձերբակալումը և հետեւեալ տարւայ Սասունի կռիւներն ու աղէտները աւելի արծարծեցին Վաղարշակի մէջ կռուելու տենչը։ Մի ընկերոջ հետ՝ նա մի քանի անգամ անաջող փորձեր արեց՝ ոչնչացնելու դաւաճան Տէր Բարսեղին և սաստիկ վըշտացած էր, որ Դաշնակցութեան տէռօրիստները նկան խլեցին իրենից այդ փառքը։

Մեծ կոտորածների շրջանում Վաղարշակ մէկն էր այն փոքրաթիւ երիտասարդներից, որոնք զէնքը ձեռին, միշտ պատրաստ էին մնում՝ պաշտպանելու իրենց և ժողովրդին։ Մուշը և շրջակայ գիւղերը ընդամէնը մի երկու տասնեակ զոհեր տուին. թշնամին չմօտեցաւ, կարծելով, թէ այնտեղ կայ մեծ քանակութեամբ զէնք ու կռւող ուժեր։

„Դաշնակցութիւնը", իր ուժերի համեմատ, առաջ էր տանում՝ երկրի մէջ „գործի պրօպագանդը", կազմակերպում էր զինատար ու զինավարժ խմբեր՝ ժողովրդի պաշտպանութեան համար։ Վաղարշակը մտաւ այդ խըմբերից մէկի մէջ։ Խումբը կենդանի կապ էր պահպանում Սերոբի հետ, իսկ սրա եղերական մահից յետոյ, օժանդակում էր Տարօնի առիւծի ցիր-ցան ձագուկներին։

1900-ից Վաղարշակը իր ընկերներով անընդհատ յարաբերութեան մէջ էր Անդրանիկի և Սասունի հայդուկների հետ, բաժանում էր նրանց վշտերն ու ուրախութիւնները, կրած ձախորդութիւններն ու յաղթանակները...

Այդ բոլորի մասին նա մանրամասն տեղեկագիր ներկայացրեց „Դաշնակցութեան" վերջին Ընդհանուր Ժողովին — ուր եկել էր իբրև պատգամաւոր,— պատմեց երկար, բերանացի կերպով, խմբերի և իր տասնամեայ յեղափոխական գործունէութեան ուշագրաւ, յուզիչ դրւագները։

Առաքելոց վանքի նշանաւոր կռւի նախաձեռնողներից և գլխաւոր մասնակցողներից մէկն էր Վաղարշակը։ Սրտի անհուն կսկիծով դիտում էր նա, թէ ինչպէս ժողովուրդը յուսահատութիւնից օրթօդօքսութեան գիրկն էր դիմում։ Հաւատափոխութեան, կամաւոր ու ակամայ ազգուրացութեան համաճարակը հանգիստ չէր տալիս նրան և Անդրանիկի ու մի քանի ընկերների հետ վըճ-

ռեցին ռևէ յանդուգն քայլով ցնցել մահացնող մթնոլորտը: Անդրանիկի հետ միասին նա վարեց բանակցութիւնները, ձևակերպեց տեղական յեղափոխականների նւազագոյն պահանջները, որոնք ժամանակին հրատարակւեցին „Դրօշակ"-ի և եւրոպական թերթերի մէջ: Ընթերցողը յիշում է այդ փոքրիկ, սրտառուչ դիւցազնութիւնը, ուր մի բուռն հայ ապստամբներ, ձմրան սառնամանիքներին վանքում ամրանալով, կռւելով ու պաշարւելով՝ ի վերջոյ աջողում են կտրել թշնամու շղթան և անյայտանալ դէպի լեռները...

Եւ այդպիսի շատ ուրիշ փորձութիւններից ճողոպրեց մեր հերոսը, որպէս զի յետագայում արժանանար աւելի փայլուն մի ճակատամարտի, որ նա մղեց սքանչելի արիութեամբ և որը յաւերժացրեց նրա սիրելի դէմքը հայ յեղափոխական տարեգրութեան մէջ:

## ԱՐՇԱԿ ՍԱՆՈՍԵԱՆ
(ԳՐԳՕ)

Վանայում անցեալ յունիսի 24-ին դժբախտ արկածի զոհ գնաց, դեռ երիտասարդական հասակում, մեր հին գործիչներից մէկը՝ Գրգօն: Իր ընկերների հետ լողանալու գացած ժամանակ՝ նա անզգուշաբար բարձրից նետւում է ծովը, կարծելով՝ թէ ջուրը խորն է, ուժգին զարնւում է յատակին և փլւում կիսամեռ: Բժիշկների խնամքները անզօր են անցնում, և Գրգօն մեռնում է ուղեղի վնասւելուց, առանց կարողանալու ուշքի գալ:

Գրգօն ծնւել է 1870 թւին Կիւմիշխանէում: Փոքրիկ հասակում ծնողները նրան տանում են Տրապիզոն և տալիս են ազգային վարժարանը, ուր նա մնում է մինչև 1885 թ.: Դպրոցական այդ շրջանը անհետևանք չէ անցնում Գրգօյի զգայուն հոգու համար: Նրա մէջ բուռն հետաքրքրութիւն է շարժւում դէպի հայ ժողովրդի կենտրոնը, դէպի նրա ցաւերն ու բողձանքները: Եւ երբ մի օր նա իմանում է, թէ իր հայրը մասնաւոր գործերով Հայաստան պէտք է մտնի, աղաչանքով, պաղատանքով, լաց ու կոծով ստիպում է վերջապէս, որ իրեն էլ հետն առնի: Պատանի Արշակը երկու տարի Վանայ և Մշոյ կողմերը անցկացնելուց յետոյ՝ վերադառնում է Տրապիզոն և այնտեղից էլ իր ծնողների հետ տեղափոխւում է Պոլիս:

1892 թւի վերջին, երբ Դաշնակցութիւնը նոր էր հիմն դնում Պոլսում, նա եղաւ առաջին համակիրներից մէկը և հետզհետէ այն աստիճան գրաււեց կազմակերպութեան գործերով, որ երկու տարի չանցած՝ ձգեց իր մասնաւոր պարապմունքները և բոլորովին անձնատուր եղաւ յեղափոխութեան: Այդ թւականին էր, որ Գրգօն ձերբակալւեց Խտիրնէում, ուր գնացել էր մի ձեռնարկ գլուխ բերելու: Բանտից ազատւելով, նա շարունակում էր գործը կազմակերպութեան զանազան շրջաններում, այլ և այլ պաշտօններ ստանձնելով: 1988 թւականին նա ստիպւած եղաւ բոլորովին ձգել Պոլիսը, անցնել Կովկաս, այնտեղից էլ վերջին տարիներս՝ Ամերիկա: Բայց երկրի շարժումները հանգիստ չէին տալիս Գրգօյի անհանգիստ հոգուն, նա վճռեց մտնել հայդուկային խմբերի մէջ և անցնել Մշոյ ու Սասնոյ կողմերը, նետւել մի ասպարէզ, թէև իրեն համար նոր, անսովոր, բայց հրապուրիչ և խրախուսող: Նա չհասաւ իր մուրազին, կէս ճանապարհին զոհ գնալով իր անզգուշութեան:

Գրգօն անհանգիստ, անզուսպ, դիւրագրգիռ բնաւորութեան տէր էր: Դա էր պատճառը, որ անձնական ընկերներ քիչ ունէր: Բայց դրա հետ միասին նրա անշահասիրութիւնը, անվեհերութիւնը, կռւելու և զոհւելու պատրաստակամութիւնը մոռացնել էին տալիս նրա ամեն թերութիւնները:

Դժբախտ էր Գրգօն, որ չկարողացաւ զոհւել այն վայրերում, որոնց հետ կապւած էր իր պատանեկան յիշողութիւններով:

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԴԻՄՈՒՄԸ

Առաջ ենք բերում Ա. Հ. Կաթողիկոսի գրաւոր դիմումը ֆրանսիական հանրապետութեան նախագահ Լուբէին, որ ներկայացւած է յատուկ պատգամաւորութեան միջոցով: Այդ խնդրագիրը պիտի ներկայացւի Բերլինի դաշնագիրը ստորագրող միւս պետութիւններին, նաև Ամերիկայի Միացեալ Նահանգների նախագահին:

Նորին Բարձրապատուութեան
Պարոն Նախագահի Հանրապետութեան Ֆրանսիոյ

Տէր Նախագա՛հ,

Մինն 'ի հնադարեան եկեղեցւոյն Արևելեան, որ քան զամենայն եկեղեցիս քրիստոնէական նախահաստ հանդիսացաւ յԱրևելս և յընթացս դարուց և ժամանակաց իւրով մեծագործ Արքայիւքն և հեղինակաւոր Հայրապետովքն մղեաց մարտս ընդդէմ կռապաշտութեան և մահմէտականութեան և յետ կորուսանելոյն իւր զիւրն սեփական անկախութեան, առաջին եբաց զդրունս հեռաւորն Արևելից մեծափարթամ վաճառականութեամբ, յաշխարհէն Հնդկաց մինչ յԱմստերդամ, եկեղեցին, ասեմ և ժողովուրդն որ պահեաց զիւր կրօն անաղարտ զոր ի սկզբանէ յԱռաքելականն անտի դարուցն ընկալաւ, պահեաց զիւր լեզուն զոր աստուածային իմն ընկալաւ հրաշիւք և եկաց մնաց ցայսօր հարազատ յիւրումն դաւանութեան, հաւատարիմ տիրող պետութեանց իւրոց և խաղաղ հետևող միայն իւրումն զարգացման ըստ ներելոյ հանգամանաց ուսման, արհեստից, երկրագործութեան, վաճառականութեան և հաւատացեալն նման ի տիրողացն իւրոց պետական ծառայութեանց, այսօր ի մուտս քսաներորդ դարու լուսաւորութեան և ազատութեան, հասեալ 'ի ծայր աստիճան յուսահատութեան և վերջին շնչոյն ընդ ձեռն իմ և իմոյս տկար ձայնիւ, որ եմ տարաբախտ հովիւ չարատանջ հօտին, արկանէ զխոնարհ աղերս իւր առաջի լուսամիտ և արդարադատ Ատենի Ձերում բարձրապատուութեան, խնդրելով զզօրաւոր ձայն միջամտութեան ազատն Ֆրանսիոյ առ յոյժ թշւառ և ննջեալ վիճակ իւր որ 'ի հայկական նահանգս օսմանեան պետութեան:

Ձեն զանխուլ 'ի յիշատակարանաց հանրապետութեան Ֆրանսիոյ, ձայն բողոքոյ և խնդրանաց ազգին հայոց ի ձեռաց նեղչաց իւրեանց 'ի սահմանս Թիւրքիոյ, ընդ ձեռն վայրագ Քրդաց, Տաճկաց և Չէրքէզաց, առաջին հնչեցաւ ի դրունս մեծ պետութեանց լուսաւորն Եւրոպիոյ 'ի 1878 ամին, յորժամ գումարեցաւ վեհաժողովն Բեռլինի, և ևս խնդրագ-

կուս էի որ յայնժամ իբրև մեծ Արքեպիսկոպոս և նախկին պատրիարք Կ. Պոլսոյ և առաջին քաղաքաւոր առաջի օսմանեան պետութեան և գլխովն ամենայն ճնշմանց և հարստահարութեանց, բռնութեանց և բռնաբարութեանց, շրջեցայ յԵւրոպայ, կայսրութեանց Գերմանիոյ և Աւստրիոյ, թագաւորութեան Իտալիոյ, որպէս և ընկերակիցն իմ Արքեպիսկոպոսն Խորէն Նարպէյ Մեծին Ռուսիոյ առ ազատարար կայսրն Աղէքսանդր Բ.-ն, որով և խրատեցի զանսալ վեհաժողովոյն զհայկական խնդիրն խնդրի ի դաշնադրութեան վեհաժողովոյն զյօդուածն վաթսուն և մի երրորդն։

Տէր Նախագա՛հ,

Չը համարձակիմ ծանծրացուցանել զԲարձրապատուութիւն Ձեր երկարաբանութեամբ, այլ և զխղճութիւն իրացն չը կարեմ ծածկել, եթէ յընթացս քառորդ դարու առաւել ևս դժուարացաւ և ծանրացաւ վիճակ խաղաղ հայ ազգաբնակութեան քան եթէ թեթևացաւ, ծանրացաւ նորանոր հարկօք, դժուարացաւ անթիւ բանտարկութեամբ և աքսորանօք, ճնշեցաւ խիստ տանջանօք, վատթարացաւ մեծադղորդ գաղթականութեամբ, սպառեցաւ համազգային կոտորածովք, նուազեցաւ անթիւ կրօնափոխութեամբ, մաշեցաւ անթիւ բռնաբարութեամբ, ոչ խնայեցաւ մանկանց և պատանեաց, խլեցաւ պարկեշտութիւն կուսանաց, ընտրեալ օրիորդաց, ներկեցաւ երկիր արեամբ բազմամեայ ծերունեաց, պղծեցան առագաստք բազմաթիւ հարսանց, մաշեցան կաշիք սրբանուէր հոգևորականաց, աւարեցան և յափշտակեցան բազմամեայ վաստակք և հարստութիւնք ամենայն ժողովրդեան և լքան ցամաքեցան խաղաղ կեանք և կենդանութիւն նորա, որ կայ վարդի իբրև կմախք ցամաքեալ և չորացեալ։ Եւ որ աղետալին է, ոչ շատացեալ պաշտօնէիցն, զօրացն, սանձարձակ քրդաց և չէրքէզաց զկոտորածն ընդհանուր որ սկիզբն էառ յամին 1895 և տևեաց ցվերջն 1896 ամին, այլև իսկ ծագեալ կայ նոյն վիճակ սոսկալի կոտորածին 'ի սահմանս Սասնոյ, Մշոյ, 'ի նահանգն Բիթլիզայ և սպառնայ օրըստօրէ առնուլ զընդարձակ ծաւալ և տարածիլ ընդ ամենայն գաւառս հայկականս։

Ձերդ Բարձրապատուութի՛ւն,

Իբրև գլուխ ընդհանրական և առաքելական եկեղեցւոյն հայաստանեայց և իբրև հայր հոգևոր փոքրաթիւ հայ ժողովրդեան որ ի սփիւռս աշխարհի, ուրախակից զաւակացս խաղաղութեան և սգակից տառապանաց նոցին և չարչարանաց, անհնարին համարելով զներկայ կացութիւն հօտին իմոյ որ ի Թիւրքիայ, յետ պարզաբանելոյ զխեղճութիւն իրացն և կրողութեանց ճշդութեամբ և ճշմարտութեամբ, զայս խոնարհ թղթովս և աղաչաւոր ձայնիւս բարձեալ յիմ վրայ զծանրութիւն ութսուն և հինգ ամաց և աղաչելով աղաչեմ զՁերդ վեհանձն ողորմածութիւն, բարձրացնել զհզօր և զազատարար ձայն պաշտպանութեան Մեծին և Մարդասէրին Ֆրանսիոյ 'ի պաշտպանութիւն և 'ի բարօրութիւն տառապեալ և ամենայն հօտին իմոյ որ ընդ լծով մահմէտականութեան։

Ոչ 'ի խնդիր ելանեմ կորուսեալ Թագին Արշակունեան թագաւորութեան հայոց, կամ 'ի գլուխ Գայխանին Բագրատունեաց և կամ ի բարձումն Առիւծադրօշ խաչին Ռուբինեան, այլ յոյժ համեստօրէն աղաչեմ զթեթևացումն ծանրութեան հարկաց մերկացեալ ժողովրդեան, ազատ երթևեկութիւն վաճառականաց և այլ դասակարգի 'ի ներքին նահանգս և յարտասահմանս, վերադարձ գաղթականաց և պանդխտաց 'ի հայրենի երկիրն իւրեանց և վերադարձ գրաւեալ կալուածոց նոցին. ներումն բանտարկելոց, ազատ պաշտպանութիւն իւրեանց և ազատ բողոքարկութիւնք ընդդէմ անիրաւութեանց, իրաւունք ինքնապաշտպանութեան հայոց ընդդէմ կամայականութեանց քրդաց, չէրքէզաց և մոլեռանդ մահմէտականաց և վերահսկողութիւն քրիստոնեայ պետութեանց 'ի գործադրութիւն նոր առնմանեալ կարգաց և վարչութեանց։

Վասն հաստատելոյ զայս աղերս իմ խոնարհ յԱտեան պետութեան Ձերոյ, կարգեցի ինձ նուիրակս երկուս յարժանաւոր եկեղեցականաց իմոց զՅովսէփն Սարաճեան արքեպիսկոպոսն հայոց Ամերիկայի և զՄանուկն Այվատեան արքեպիսկոպոսն հայոց Պարսկա-Հնդկաստանի։ Յուսալ յուսամ, Տէր Նախագահ, եթէ լսելի լիցին խնդիրք իմ առաջի մարդասիրութեան Ձերոյ և 'ի շնորհս ողորմած պաշտպանութեան և միջնորդութեան Մեծի Պետութեանն, տառապեալ հօտն իմ գտցէ զփոքր ինչ ապահովութիւն և խաղաղութիւն, որ վասն և մնայցեմ առյաւէտ շնորհակալու և յոյժ խոնարհ աղօթարար վասն կենաց Ձերոց.

(Ստորագրուած)

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՄԿՐՏԻՉ ԱՌԱՋԻՆ

(Կնիք Հայրապետական)

յ30 մայիսի 1904 ամի
յԱրարատեան Մայր Աթոռ
Ի Ս. Էջմիածին

# ՆՈՐ ՀՈՎԵ՞Ր...

Այնքա՞ն վարժուել ենք յուսախաբ լինել պետերբուրգից ծանուցուած „նոր հովերի“ նկատմամբ.

Պլեհվէ-մինիստրի սպանութիւնից յետոյ ամբողջ ամիս ու կէս անցած՝ ահա վերջապէս գտնւեց նրա յաջորդը, Սվյատոպոլկ Միրսկի, որի մասին ասում են, թէ ներշնչուած է ազատամիտ հովերով, թէ պիտի հետևէ հաշտարար քաղաքականութեան ֆինների, հրէաների և ուրիշ ազգութիւնների, ինչպէս նաև ռուս ընդդիմադիր տարրերի վերաբերմամբ:

Մօտիկ ապագան ցոյց կտայ, թէ որքան ստոյգ են այդ լուրերը, որոնք մեծ մասամբ բղխում են ռուս կիսապաշտօնական աղբիւրներից: Յամենայն դէպս, անկարելի չէ թւում, որ նոր մինիստրը մասամբ տէռորի երկիւղից մղուած, մասամբ էլ պետութեան իրական շահերով ղեկավարուելով՝ հրաժարուէ այն բարբարոս պօլիցիական սիստեմից, որ թագաւորում էր իր նախորդի օրով:

Ի դէպ է յիշել այստեղ Իշխան Մեշչերսկու մի յօդուածը, որ հրատարակւեց Պլեհվէի սպանութիւնից անմիջապէս յետոյ և որ ահագին աղմուկ հանեց թէ Ռուսաստանում, թէ Արտասահմանում: Դա մի համարձակ քննադատութիւն էր ուղղուած Պլեհվէի քաղաքականութեան դէմ: Տեղի սղութեան պատճառով՝ առաջ ենք բերում այդ յօդուածի էական կէտերից մէկը միայն.

„... Ինձ թւում է, որ քաղաքականութիւնը այլազգիների ու այլակրօնների վերաբերմամբ պէտք է հիմնուած լինի նրանց ազատութեան և բնիկ ռուսների հետ հաւասարութեան վրայ... Իրաւունքներով հաւասար լինելով ռուսների հետ՝ նրանք զրկւում են առիթներից և միջոցներից՝ ստեղծելու կորպորատիվ ուժ, մինչդեռ անհաւասար իրաւունքներ ունենալով՝ նրանք կազմակերպում են կառավարչական քաղաքականութեան հակառակորդ կորպորացիաներ (ընկերութիւններ), և ուժ գտնելով իրենց միութեան մէջ, ոչ միայն կռւում են ռուս

ազգայնութեան դէմ, այլ և նոյնիսկ սարկացնում են նրան։ Դրանով է բացատրւում օրինակ, թէ ինչու Կովկասում հայերի դէմ ուղղւած միջոցները այնտեղ հասցրին, որ հայերը նւաճեցին Կովկասը"...

# ՍՕՑԻԱԼԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

## ԱՄՍՏԵՐԴԱՄԻ ԿՕՆԳՐԷՍԸ.

### I.

Պրօլետարիատի միջազգային բանակը աճում է օրէցօր և մարդկութեան բազմատանջ մեծամասնութիւնը, բոլոր ճնշւածները, քաջալերւելով իրենց ցաւագին մաքառումների մէջ, անձկութեամբ սպասում են այն մեծ կատաստրօֆի օրին, երբ սօցիալական յեղափոխութեան ալիքների մէջ պիտի փլատակւի հին աշխարհը իր մանր ու խոշոր բռնակալներով, իր դասակարգային բաժանումներով, իր աւատական ու բուրժուական առանձնաշնորհումներով...

Եւ հին աշխարհի փլատակների վրայ պիտի կառուցւի մեծ Ինտերնացիօնալը, որ մարդկութեան լաւագոյն զաւակների տենչանքն է եղել դարերից ի վեր, բայց որ միմիայն մեր դարաշրջանում կարող է մարմնանալ՝ թէ մարդկանց գիտակցութեան և թէ իրականութեան մէջ։

Այո, նոյնիսկ իրականութեան մէջ։ Այդ հոյակապ ու աղմկոտ նիստերը, ուր բոլոր ազգերից, երկրագնդի բոլոր ծայրերից համախմբւած պատգամաւորները՝ բոլորն էլ տոգորւած մէկ աշխարհայեցութեամբ, բոլորն էլ միացած մի ընդհանուր, կօմմունիստական դաւանանքով՝ գրկախառնւում են բանւորական „Մարսէյլիէզի“ գոռ հնչիւնների տակ և մշակում են ընդհանուր տակտիկ „համաշխարհային սօցիալական հանրապետութիւնը“ նւաճելու համար,—դա հէնց ինքը Ինտերնացիօնալն է, դա ինքը միջազգային եղբայրութիւնն է, վաղւան աշխարհը։

Որքա՜ն սփոփիչ մի վայրկեան էր այն, երբ Ամստերդամում, այդ այլազան երկրների ներկայացուցիչները միաբերան նշաւակում էին մարդկութեան ամենաահւելի պատուհասներից մինը — պատերազմը — և երբ երկու կռւող ազգերի՝ Ռուսաստանի ու Ճապօնիայի՝ պատւիրակները ընդհանուր ցնծութեան մէջ իրարու ձեռք էին սեղմում եղբայրաբար և հրապարակով իրենց գարշանքը յայտնում Ցարի ու Միկադօյի կառավարութիւններին, որոնց շնորհիւ Ծայրագոյն Արևելքը հեղեղւում է այսօր մարդկային արիւնով..

*

Միջազգային սօցիալիստական վեցերորդ համաժողովը բացւեց օգոստոսի 14-ին, Ամստերդամում, ներկայութեամբ ամենահռչակաւոր դէմքերի — Բէբէլ, Կաուցկի, Բերնշտայն, Ժօռէս, Գէդ, Վայեան, Պրէսանսէ, Հայնդման, Վանդէրվէլդ, Ադլէր, Ֆէրրի, Չիպրիանի և այլն — որոնք համաշխարհային սօցիալիստական սպայակոյտի զարդն են կազմում։ Ռուսաստանից ներկայ էին առանձին-առանձին պատւիրակութիւններ՝ Սօցիալիստ-յեղափոխական կուսակցութեան, Սօցիալ-դէմօկրատիայի և հրէական „Բունդ“ կոչւած կազմակերպութեան կողմից։

Նիստերը երկար էին, վիճաբանութիւնները՝ բուռն, փոթորկոտ։ Երբէք, ոչ մի ազգային կամ միջազգային կօնգրէսի ընթացքում այսքան մոլեգնութեամբ չէին ընդհարւել տարբեր հասկացողութիւնները՝ սօցիալիստական տակտիկի մասին։ Ով որ գնում էր Ամստերդամ, գիտէր, որ մի եզակի ճակատամարտի պիտի հանդիսատես լինէր,—բուռն, գաղափարական մի ճակատամարտի։

Երկու ուղղութիւններ, որոնք տարբերւում են ոչ թէ իրենց նպատակով, այլ նրան հասնելու ճանապարհներով, և որոնցից իւրաքանչիւրը ունի փայլուն, աշխարհահռչակ փաստաբաններ — այդ երկու ուղղութիւնները մենամարտում էին և սօցիալիստական միջազգային արէօպագը կոչւած էր ձայն տալու մէկին կամ միւսին ի նպաստ։

Վէճը բաւական հին է արդէն։ Նրա արծարծողն է հռչակաւոր սօցիալիստ-թէօրիտիկոս Էդւարդ Բերնշտայն, Մարքսի և Էնգելսի անմիջական աշակերտներից մինը, որ սրանից եօթ տարի առաջ հրատարակեց — նախ Neue Zeit-ի մէջ, ապա առանձին գրքով — իր քննական յօդւածները՝ թէօրիական ու գործնական մարքսիզմի մասին։ Մարքսի և Էնգելսի տեսութիւնները — մատերիալիստական աշխարհայեցութիւն, դասակարգային կռիւ, կապիտալի կենտրօնացում և այլն — Բերնշտայն առաջարկում էր այդ բոլորը ենթարկել հիմնական վերաքննութեան, րէվիզիօնի։ Այստեղից և նոր հոսանքի անունը — րէվիզիօնիզմ։ Մեծ եղաւ նրա ազդեցութիւնը, կարելի է ասել նոյնիսկ, շառաչունը բոլոր երկրներում։ „Ուղղափառները“, որոնք սովորել էին ընդունել Մարքսի և Էնգելսի իւրաքանչիւր խօսքը, որպէս անսխալական մի ճշմարտութիւն, փոքր ինչ սթափւեցին և սկսեցին քննադատաբար վերաբերւել իրենց դաւանած վարդապետութեան։ Այստեղ է Բերնշտայնի մեծ, պատմական ծառայութիւնը։ Սօցիալիզմը չտուժեց դրանից, այլ միայն վաստակեց։

Բերնշտայնի յայտնած մտքերի մէջ ճշմարտութեան բաժինը կար, անշուշտ։ Այլապէս նրանք չէին էլ գտնի այնքան լայն տարածում։

Ճիշտ է, որ մարքսեան „մատերիալիստական թէօրիան“ իր շատ խոշոր առաւելութիւններով հանդերձ՝ անբաւարար է՝ պատմական բովանդակ էւօլիւցիան լուսաբանելու համար. Ճիշտ է, որ կապիտալի կենտրօնացումը — փոքրաթիւ հարուստների ձեռքում — չէ կատարւում այնպիսի արագութեամբ, որպիսին նախատեսնւած է Մարքսի և Էնգելսի գրւածքների մէջ. Ճիշտ է, որ այդ վերջինները, ինչպէս և իրենց ուղղադաւան հետևողները, շատ էին ցած գնահատում կապիտալիստական կարգերի տևողութեան շանսերը, որ նրանք չափից դուրս լաւատես էին, գուշակելով այդ կարգերի մօտալուտ անկումը սօցիալական յեղափոխութեամբ ու պրօլետարիատի դիկտատուրայով. Ճիշտ է, որ բանւորական սինդիկատներն ու կօօպերատիւները — արդիւնաբերող ու սպառող ընկերութիւնները — որոնք ծաղկում են այսօր ռամկավար երկրների մէջ, մի գերազանց միջոց են՝ դաստիարակելու բանւոր դասակարգը ապագայ սօցիալիստական կարգերի համար, որ այդ ընկերութիւնները, միշտ աւելի բազմանալով ու ներշնչւելով սօցիալիզմի տիրական գաղափարով՝ փութացնում են և ոչ յապաղեցնում՝ սօցիալական շարժումը. Ճիշտ է, որ սօցիալիստ կուսակցութիւնները բոլոր երկրներում պիտի ձեռք մեկնեն իրենց „ազգակից“ ռամկավարական կուսակցութիւններին՝ ստեղծելու համար այդ երկրներում ընդարձակ մտքով ռամկավար (դէմօկրատ) ռէժիմ, որի մէջ միայն բանւորական տարրը կարող է

հասնել իր ուժերի լիակատար փթթման և որը անհրաժեշտագոյն պայմանն է պրօլետարիատի վերջնական յաղթանակի։

Այդ բոլորը ճիշտ է։

Սակայն Բէրնշտայնի քննական յօդուածներում կան նաև խոշոր վրիպումներ, կան ծայրայեղութիւններ։ Ընդունելով, որ բուրժուա-սեփականատէր դասակարգը մի առաձգական մեծութիւն է, որ նրա մէջ կան բազմաթիւ խաւեր—մանր արհեստաւորից սկսած մինչև միլիօնատէր կապիտալիստը, խեղճ, կիսաքաղց, թէև սեփականատէր, գիւղացուց սկսած մինչև խոշոր կալուածատէրը. որ հետևապէս, դժուար է սահմանագիծ դնել բուրժուայի և պրօլետարի մէջ. քարոզելով միւս կողմից, որ սօցիալիստները մշտնջենապէս պիտի աշխատակցեն բուրժուա-դէմօկրատ կուսակցութիւններին, Բէրնշտայն հակումն ունի գրեթէ բոլորովին *ձուլելու* բանւոր դասակարգը միւս դասակարգերի մէջ, սօցիալիստ կուսակցութիւնը միւս կուսակցութիւնների մէջ. . .

Այդտեղ է, որ „րէվիզիօնիզմը“ վրիպում է չարաչար. սօցիալիստ կուսակցութիւնը այդպիսով պիտի կորցնէր իր հզօր ինքնուրոյնութիւնը և *սօցիալիզմը* պիտի զրկւէր իր յեղափոխական հմայիչ կերպարանքից, նոյնանալով, գրեթէ ձուլւելով *դէմօկրատիզմի* հետ։

Այս հետևանքները անխուսափելի կերպով բղխում են Բէրնշտայնի տեսութիւններից, չնայած, որ նա ինքը յայտարարում է միշտ, և է *իրօք*, համոզուած սօցիալիստ (նա անդամ է գերմանական Ռայխստագի սօցիալիստ պատգամաւորութեան), չնայած, որ նա ընդունում է սօցիալիզմի վերջնական նպատակը, այսինքն ընդունում է, որ տնտեսապէս ու քաղաքականապէս կազմակերպւած պրօլետարիատը — սեփականազուրկ բանւոր ընդհանրութիւնը—պիտի նւաճէ քաղաքական ուժը, պիտի դառնայ իշխող դասակարգ և պիտի դարձնէ ներկայիս բոլոր հարստութիւնները՝ արդիւնագործութեան բոլոր միջոցները՝ *համայնական սեփականութիւն*։

(Կը շարունակւի)

# ԱՄՍԱԼՈՒՐԵՐ

* * *

Ռուսական „Պետերբուրգսկիյա Վեդօմօստի“ լրագրին գրում են Բայազէտից.

„Ալաշկերտի դաշտավայրում քրդերը թալանել են 5 հայ գիւղեր։ Դիմադրութիւն ցոյց տւող տղամարդիկ մեծ մասամբ կոտորւել են, կանայք և աղջիկներ բռնաբարւել։ Քրդական գազանութիւններին մասնակցել էին Զօր և Մօսուն պահականոցի տաճիկ զօրքերը։ Այս խժդժութիւնների թարմ հետքերով հայ ապստամբների մի քանի խմբեր յարձակւեցին քրդերի ու տաճիկների վրայ և ուժանակային ռումբերով կոտորեցին մինչև 300 հոգի։ Արէժլնդիրները այնուհետև աւերեցին Մօսունի և Զօրի պահականոցները։ Այս դէպքի լուրն առնելով, Մուշի միւթէսարիֆը ապստամբների դէմ մի ձիաւոր գունդ ուղարկեց, որը ենթարկւեց դարանակալ մի խմբի յարձակման և կորցրեց 250 հոգի“։

*

Բաղէշի վալին հաղորդում է, որ հայ ապստամբապետ Անդրանիկը նամակ է ուղարկել Մուշի անգլիական հիւպատոսին, որի մէջ սպառնում է, թէ շուտով կը վերսկսի գործողութիւնները։ Անգլիական շրջաններում չեն հաւատում այս լուրին։ Վանի վալին յայտնում է, որ իր վիլայէթում երևացել է մի նոր հայ ապստամբական խումբ։

*

Ինչպէս որ Մուշի հիւպատոսական տեղեկագիրները կ'իմացնեն՝ օգոստ. 13-ին կռիւ մը տեղի ունեցած է 40 հոգինոց հայ խմբի մը և ոստիկան-զինւորներու միջև, որոնցմէ մին սպաննւած է և վեցը վիրաւորւած։ Խումբը քշւած է։

Օգոստ. 17-ին խումբ մը յարձակեց Պիթլիզի վրայ, և ընդհարում՝ ունեցաւ տեղական զօրքերու հետ։

Ասիկա մեծ սարսափ պատճառեց հայերուն և միւսիւլմաններուն և փոյթագութիւններ կատարւեցան հայերուն նկատմամբ։ Խումբի գլխաւոր պետն է Անդրանիկ։

*Frank. Zeitung.*

*

Կ. Պօլիս, 19 օգոստոս

Նոր լուրերուն նայելով, վերջին օրերս տեղի ունեցած կռիւներու ժամանակ, Պիթլիզի նահանգի մէջ Շամիրամ՝ գիւղի միայն քանի մը տուները քանդւած են։ Հայ խումբը կրցաւ Նէմրութ հասնիլ։ Զօրքերը ունեցան հինգ սպանւած և վիրաւոր։ Չէ լսւած թէ քիւրդերը յարձակման մասնակցեր են։

Վերջին ատեններս Կովկասի սահմանէն նոր խմբեր անցնելու են։

*Reuter*

*

Օգոստոս 31-ին հայ ապստամբները Վան քաղաքը մտան և չորս տուներ պաշարելով, պատնէշ կանգնեցին։

Կռիւը սկսաւ զօրքերու հետ, որոնցմէ երկուքը սպանւեցան։ Ուրիշ քանի հոգիներ ևս կորսւած են։

Իշխանութիւններ քանի մը տուներ կրակի տւին, որպէսզի հնարաւոր լինի զօրքերուն աւելի մօտէն պաշարելու՝ ապստամբներուն գտնւած տուները։

Քաղաքի մէջ մեծ սարսափ կը տիրէ։ Բազմաթիւ բնակիչներ կը փախչին, մինչդեռ ուրիշներ կ'ապաստանին եկեղեցիներու և մօտակայ վանքերու մէջ։

Իշխանութիւնները կը յայտարարեն, որ ուրիշ հայ խմբեր տրամադիր են պարսկական սահմանը անցնելու։

Վանի անգլիական փոխ-հիւպատոսը, որ այժմ մասնաւոր պաշտօնով Մուշ կը գտնւի, հրաման ստացաւ շուտով Վան վերադառնալու։

*Reuter*

*

5 Սեպտեմբեր, Կ. Պօլիս

Դեսպանները Վանէն հեռագրական տեղեկութիւններ ստացան, որոնց համեմատ հինգշաբթի օր 150 հոգիէ բաղկացած հայ յեղափոխական մի խումբ՝ ռուսահայի մը հրամանատարութեամբ Վան մտաւ, սուլթանի գահակալութեան տարեդարձի առթիւ խռովութիւններ հանելու։ Խմբի և թիւրք զօրքերու միջև կռիւը պայթեցաւ։ 41 հոգի սպանւած են։ Ասկէ զատ 35 տներ այրւեցան։ Ռուսիոյ դեսպանը այս խնդրի առթիւ 2 ժամ տեսակցութիւն ունեցաւ մեծ-վէզիրի հետ։

*Frank. Zeitung*

*

Սօֆիայի թղթակցէն.

„Հիւպատոսներու վերջին տեղեկութիւնները կ'ըսեն,

որ հայ յեղափոխականները դեռ կը շարունակեն դիմադրել զօրքերուն, որոնք անկարող եղան զանոնք հնազանդեցնելու կամ՝ ցրելու: Բնակիչները մուսուլմաններու և զօրքերու վախէն, որոնց թիւը 2,000 է, վանքերը ապաստանեցան:

Հակառակ Դրան ընդունածին թէ՝ ապստամբները քաղաքին շրջակաները երեւցած են, կոնսուլներու հեռագիրները կը հաստատեն որ առաջին յարձակումը տեղի ունեցեր է քաղաքի մէջ, ֆրանսական հիւպատոսարանէն 500 մէտր հեռաւորութեան վրայ:

Երէկ Ռուսիոյ դեսպանը կացութեան մասին երկարօրէն տեսակցութիւն ունեցաւ մեծ եպարքոսի հետ:

Temps

*

12 սեպտեմբեր, Կ. Պօլիս,

Վանի հիւպատոսներէն ստացուած հեռագիրներուն նայելով՝ հայ յեղափոխականները լեռները քաշուեցան: Միացեալ-Նահանգաց հիւպատոսը, որ հայերու մասին լաւ տրամադրուած է, կը յաւելու թէ՝ թիւրք զօրքերը մարդկայնութեան? ապացոյցը տուին և թէ իշխանութիւնները կ՚աշխատին քրիստոնեայ ազգաբնակութիւնը պաշտպանել: Havas

*

Daily Telegraph-ին գրում են Բերլինից.

„Նայած այն տեղեկութիւններին, որոնք հասել են այստեղ Կ. Պօլսից ու Թիւրքահայաստանի մի քանի կէտերից, շատ մեծ վտանգ կայ, որ բովանդակ հայկական հարցը նորից յարուցէի: Ակներև է, որ մի քանի վիլայէթներում հայ յեղափոխական կոմիտէն մեծացրել է իր համախոհների թիւը, զէնք ու ռազմամթերք է ամբարել: Թէպէտ և ռուսաց ու թիւրքաց սահմանի վրայ զօրքերը հրաման են ստացել ամենախիստ կերպով հսկելու, բայց էլի մեծ թւով ռուսահայեր անցնում են սահմանը՝ ագիտացիան ղեկավարելու համար:

„Ընդհանուր կարծիք է այստեղ, որ փոքր-Ասիայի արևելքում իրերը հասել են կրիտիքական մի շրջանի, որը պիտի փութով պետութիւնների միջամտութիւնը հրաւիրէ“:

*

Սեպտեմբերի վերջերը՝ Հայաստանի մէջ ապստամբութիւն մը յայտարարուած ըլլալով՝ հրաման տրուած է, որ չորրորդ զօրաբանակը շարժուն վիճակի մէջ դրուի: Ամենախիստ հրահանգներ ղրկուած են՝ ապստամբական ամէն փորձերը անմիջապէս զսպելու: Havas

*

„Հ. Յ. Դաշնակցութեան Խորհուրդը“ Բեռլինի դաշնագիրը ստորագրող մեծ պետութեանց արտաքին գործոց նախարարներուն ուղղեց հետեւեալ հեռագիրը.

„Թիւրք կառավարութիւնը հրաման տուած է, որ Երզնկայի չորրորդ զօրաբանակը շարժուն վիճակի մէջ դրուի, և ապստամբութիւնը զսպելու պատրուակով նոր կոտորածներ պիտի սարքէ:

„Հայ յեղափոխականները բնաւ չեն ուզեր, որ իրենց խնայուի. բայց անոնք իրաւունք ունին պահանջելու, որ թիւրք կառավարութիւնը, հայկական շարժումին դէմ մղած կռւոյն մէջ, իր ամբոխի և սպանիչ յարձակումները չ՚ուղղէ անպաշտպան ժողովուրդին դէմ:

„Հակառակ պարագային կուսակցութիւնը զինք պարտաւորուած պիտի տեսնէ դիմելու ծայրայեղ միջոցներու, որոնցմէ մինչև այժմ խուսափած է:

„Կազմակերպութիւնը յուսով է, որ դիւանագիտութիւնը ազգաց միջամտութեամբ մը վերջապէս պիտի երաշխաւորէ խաղաղ ազգաբնակութեան ապահովութիւնը“:

*

Վիեննայի Freie Presse-ն, տպագրելով „Հ. Յ. Դաշնակցութեան Խորհրդի“ հեռագիրը՝ ուղղած արտաքին գործերի մինիստրներին՝ աւելացնում է, որ Կ. Պօլսից նոր եկած մի հեռագրի համաձայն, չորրորդ զօրաբանակի մօբիլիզացիայի լուրը հերքւում է:

*

Սօֆիայի մակեդոնական շրջանակներու մէջ աւելի և աւելի կը սպասեն Հայաստանի մէջ ապստամբութեան, որը պիտի ստիպէ Թիւրքիան իր չորրորդ բանակը շարժուն վիճակի մէջ դնելու և փոխադրելու եւրոպական երեք զօրաբանակէն, որ Ասիոյ բանակէն լրացուած է:

Այսպիսի պարագայի մը մէջ, մակեդոնացիք՝ դառնացած նիւթական և բարոյական տառապանքներէն՝ զոր կը կրեն թիւրքերու և անոնց բարեկամ յոյներու կողմէն, յուսահատուած աւստրո-ռուսական ռէֆօրմներու և եւրոպական ժանդարմերիայի չնչին արդիւնքէն, թերևս չպիտի անսան այն խոհեմութեան խորհուրդներուն, որ Ներքին Կազմակերպութեան պետերը կը շռայլեն անոնց և պիտի ապստամբին տէռօրիստներէ ետքը, որոնք մի քանի ամիսներէ ի վեր, աւելի քան երբեք, մշտական յարաբերութեան մէջ են հայերու ահաբեկիչ մասին հետ:

Բուլղար կառավարութիւնը, որ առայժմ Թիւրքիոյ հետ պատերազմելու մէջ ոչ մի շահ ունի, ուշադրութեամբ կը հսկէ իր սահմանին վրայէն ծայրայեղ մակեդոնացիներու երթևեկութեան վրայ: Temps

*

Freie Presse-ի մէջ կարդում ենք.

„Տարաձայնութիւնները Ամերիկայի և Թիւրքիայի միջև, որոնք ծագել էին ամերիկահպատակ դարձած հայ փախստականների հայրենիք վերադառնալու առթիւ՝ սուր կերպարանք են ստանում: Դուռը հրաժարւում է ընդունել նրանց, պատճառաբանելով, որ նրանք յեղափոխականներ են և ժամանակին փախել են իբրև յեղափոխականներ: Ամերիկան պահանջում է, որ նրանք ներս թողւին, իբրև ամերիկական ազատ քաղաքացիներ“:

*

Օլթիի շրջանում սահմանապահ զինւորներն ու կօզակները, բաւական չէ որ կողոպտել են „Արօկան“ խմբի նահատակների դիակները, բոլորովին մերկանդամ ձգելով նրանց — այդ բարբարոսները գործ են դրել նաև դիակների վրայ տմարդի վայրագութիւններ՝ որի գլուխն են ջարդել, որի թևը կտրել, որի աչքերը փորել..

Այդ էլ բաւական չէ. հրամանատար Բըկովը, յօշոտուած դիակները մէկտեղ ժողովել տալով, կանգնեցնում է շուրջը իր զինւորներին, ինքն էլ բոլորի առաջ ցցւում և նկարւում:

Այդ նկարներից, որոնց նայելիս չէ կարելի սարսուռ չզգալ, հազարաւոր օրինակներ պատրաստելով, մեր խմբագրութիւնը տարածեց Եւրոպայում, Ամերիկայում և այլ տեղեր, իբրև պերճախօս ապացոյց ռուս-ասիական համբաշխութեան և անջնջելի յիշատակ ռուս բռնապետական բարբարոսութեան: Ռուսաց սօցիալիստ-յեղա-

փոխականների օրգան՝ „Րէվոլիւցիօննայա Րոսսիա“ հրատարակեց պատկերը առանձին յաւելուածով և ընդարձակ բացատրութեամբ։

*

Հաջիբէնդում (Գանձակի նահանգ) անյայտ մարդիկ յարձակում են գործել ոստիկանական պրիստաւ Բադասովի, պահապան զինուորների սպայ Խատագովի և Ալի անունով մի ոստիկանի վրայ։ Դէպի „Լօնդօն“ հիւրանոցը տանող նեղ ճանապարհով անցնելիս՝ անտառի միջից որոտում են բերդանկաները։ Գնդակներից մէկը ծակում անցնում է ոստիկանի փորից, միւսը կպչում է Բադասովի մէջքին, երրորդը Խատագովի ուսին։ Դարանակալները անյայտանում են։ Ձերբակալուած են մի քանի անմեղ մարդիկ։

*

Կառավարութեան ջանքերը՝ թշնամութիւն սերմանել հայ և թիւրք ժողովուրդների միջև Կովկասում՝ սկսում է աջողութիւն գտնել։ Բագւում, Միրզաբէկեանի ծխախոտի գործարանում հայ բանուորները վերջերս ծեծում են թիւրք բանուորներին՝ նոյն գործարանում աշխատող հայ աղջիկներին անպատւելու համար։ Օգտւելով այս հանգամանքից՝ ոստիկանական պրիստաւը հաւաքում է թիւրք բանուորներին, նրանց ատրճանակներ ու սրեր է բաժանում և քշում հայերի վրայ։ Հայ բանուորները անպատրաստ լինելով, նրանցից սպանւում են 2 հոգի և ծանր վիրաւորւում 4-ը։ Թիւրքերը ունենում են միայն մի քանի թեթև վիրաւորներ։

Այդ դէպքից յետոյ պրիստաւը անյայտանում է քաղաքից։

*

Կովկասեան երկաթուղու գնացքներում աւազակութիւններ են տիրում։ Վագօնները լի են ժանդարմներով ու ծպտեալ ոստիկաններով։ Խուզարկում են համարեա բոլոր ճանապարհորդներին։ Չեն խնայում և կանանց։

*

Պետերբուրգից հեռագրում են Times-ին.

„Կառավարութիւնը որոշել է Անդրկովկասի սահմանների համար նշանակել մի վերահսկող, որի պարտականութիւնը պիտի լինի՝ հսկել Բագւի, Գանձակի և Երևանի նահանգների այն մասերի վրայ, որոնք կից են Պարսկաստանին, նոյնպէս և հսկել պարսկական գաւառների՝ Արդաբիլի ու Կարա-Դաղի վրայ, և ձեռք առնել անհրաժեշտ միջոցներ՝ խռովութիւնների (°) առաջն առնելու համար։

# ՌՈՒՍԱԿԱՆ ՔՐՕՆԻԿ

* * *

Նախարար Պլէվէի վրայ կատարուած ատենտատի առթիւ ս.-ռ. „Մարտական Կազմակերպութիւնը“ հրատարակել է մի կոչ, ուղղուած քաղաքակիրթ աշխարհի բոլոր քաղաքացիներին, ուր առաջ են բերուած սպանութեան հետևեալ շարժառիթները.

„Վեաչեսլաւ Ֆօն Պլէվէ ենթարկւեց մահւան պատժի.

„1) Նրա համար, որ քսան տարի սրանից առաջ Պետրոպաւլովսկի և Շլիսէլբուրգի բերդերի զնդաններում փտեցրեց „Նարօդնայա Վօլիա“ կուսակցութեան պատկանող մեր եղբայրակիցներին, ենթարկելով նրանց այնպիսի տանջանքների, որոնցից նրանք մեռնում էին տասնեակներով։ Կենդանի մնացած մի քանի ընկերներ դեռ մինչև հիմա քաշքշում են իրենց թշուառ գոյութիւնը։

„2) Նրա համար, որ նա՝ Ռուսաստանի ամենազօր բռնակալը դառնալով, ոչ միայն վերսկսեց, այլ աւելի ևս սաստկացրեց անլուր խստութիւնները ինտէլիգէնցիայի, բանուորների, գիւղացիների դէմ, բոլոր նրանց դէմ, ով մտածում և տանջւում է Ռուսաստանում։ Երկու տարի շարունակ պատասխանատուութիւնից զերծ վեզիր լինելով, նա կախաղան բարձրացրեց կամ ռուս Բաստիլների նկուղներում կենդանի թաղեց Բալմաշօվին, Լէկկէրտին, Գերշունուն, Ֆրումկինային և այլ բազմաթիւ մարտիկներին իրաւունքի և ազատութեան համար։ Նա հրացանների գնդակներով կոտորել տւեց հարիւրաւոր բանուորներ Ուֆայում և պրօլէտարների արիւնով ողողեց Հարաւի արդիւնագործական կենտրօնների սալայատակները։ Քաղաքական բանտարկեալներին տանջելու և նրանց ընկճելու համար գործ դրւող ամենաչարաչար միջոցները նա կանոնի վերածեց։ Բանը մինչև այնտեղ հասցրեց, որ բանտապահները կոտրում էին կալանաւորների կլաները։ Գիւղացիական յուզումների ժամանակ 1902 թ. նա հրամայեց գանահարել գիւղացիներին, թոյլ տւեց հարբած կօզակներին բռնաբարել կանանց ու աղջկանց, անհատների գործողութիւնների համար ամբողջ գիւղական համայնքներ ենթարկեց պատասխանատւութեան, մի բան, որ չէր լսւած արևելեան բռնապետութիւնների մէջ, բարբարոսների արշաւանքներից ի վեր։

„3) Նրա համար, որ յեղափոխական աճող ալիքները զսպելու նպատակով, նա ձգտում էր հակառակութիւններ սերմանել կայսրութեան զանազան ազգութիւնների միջև և հանել նրանց ցարի, ուղղափառ „սուրբ Ռուսաստանի“ դէմ։ Նա ծայրայեղութեան հասցրեց Ֆինլանդիայի ռուսացումը, այդ օրինական և խաղաղ երկրի սահմանադրութիւնը ոտնակոխ անելով։ Նա կատաղաբար հալածում էր լեհերին, հայերին, հրէաներին, վերջիններիս դէմ Քիշինևում և Գօմելում իսկական Բարդուղիմէոսեան գիշերներ կազմակերպելով։

„4) Նրա համար, որ նա փորձում էր միջազգային ընդհանուր ոստիկանական ցանցով պատել ամբողջ Եւրոպան, ձգտելով ենթարկել նրան ցարիզմի յետամնաց րէժիմին, և յանդգնում էր ամէն տեղ՝ Իտալիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում, թակարդներ սարքել Մոսկովեան արծւի ճանկերից դուրս պրծած ռուս յեղափոխականների համար։

„5) Նրա համար, վերջապէս, որ նա, միշտ նոյն բաժանման քաղաքականութեան հաւատարիմ՝ գործ դրեց ցարի վրայ ունեցած իր ամբողջ ազդեցութիւնը, որպէս զի պատերազմ առաջ բերի Եապօնիայի դէմ։ Սրանով նա ձգեց մեր թշւառ երկիրը պատմութեան ամենադաժան արկածներից մէկի մէջ, պաշարիւնութեամբ յանձնելով իր ֆլիբիւստիէր-բարեկամների՝ Բէզօբրազօվի, Ալէքսէևի և ընկ. ձեռքը հարիւր հազարաւոր մատաղ կեանքեր և միլիարդներով րուբլիներ, որ դուրս են կորզւել դերմարդկային աշխատանքի տակ ճնշւած, սոված ժողովրդից։

„Ահա այս ոճիրների համար, գործւած ժողովրդի և հայրենիքի դէմ, մարդկութեան և քաղաքակրթութեան դէմ, Վեաչեսլաւ Ֆօն-Պլէվէն դատապարտւած էր մահւան պատժի „Մարտական Կազմակերպութեան“ կողմից“։

*

Մեծ խառնակութիւններ են ծագել կիրակի օր օգոս-

230, Մանուկ Բէկզ 10, Հայկ Պայազատ 15, Աշոտ-Երկաթ 10, Շէյխ-Ամէտ 5, Ծխածան 5, Րաֆֆի խ. 65, Նոյն խմբի ձեռքով 10, Սևանի 10, Ենթ-ի վիճակախաղ. մնացորդ 115, Յ. Աստուրեան 97. 20, Հ. Զուքուրեան 97. 20, Սուրէն Ա. 50, Օ. Տ. 50, Յակոբիկ 40, Ճ. Ե. 40, Մէլք. Քիւփէլ, Մլքօ Տէմիր., Տէրտլի, Վարդան Խոսրով, Դր. Վարդան 10-նական, Նպարավաճառ, Բաղուճ, Զէքուճ, Ղազարոսեան Ոմն, Հայկ Ն., Աշոտ, Ոմն, Ա. Ս., Պ. Յ. Հէլուան, Յ. Մարգ., Կրկիս 20-ական, Նշիկ Երէց 30, Յ. Ք. Վասի Հալֆա 30, .Ր. 25, Ոմն 25, Մինըդատ խ. 115, Կոլեան խ. (մարտ ապրիլ մայիս) 175, Թամթուլ խ. 90, Արև խ. (յունիս-յուլիս) 185, Նոյն խմբի ձեռամբ՝ Տէօքմէ 12, Մաքարեան 8, Թորոս 12, Սարգ. Վէրտն. 5 դան.: Գումար 2057 դանեկան ողջ:

## Հ. Յ. ԴԱՇՆԱԿ. II. (ԶՐԲ.-ի) կ. կոմիտէն՝

1903 օգոստոսի 1-ից մինչև 1904 յունւար 1.—

Զարիշատի Բևեռ խմբից 8. 10 ռուբլի, Առուակ գիւղի գաղթականներից 23, Ջրաբերդի Զարզանդ 4. 35, Փառք 40, Քար 106, Գէղէօն 7. 80, Ալիք 29. 20, Սև սար նւէր 35, Փայլակ 4. 5, Նորգինի 8. 90, Մանկանց թատրոնից 11. 20, Հիսնիս գիւղ 82. 40, Զինուորներից 133, Հնձւորներից 173, Մի խումբ բարեգործներ 50, Ճառագայթի Լօքոյից 32, Յաբեթ (գնացող զինուոր) 100, Գրիգոր (գնացող զինուոր) 90, Զիթեղցի Մկրտիչ Գուրգէնի ձեռամբ 12, Կ-ւցի ոմնից նւէր Բ-ի միջոցաւ 20, Քարից գնացող մի զինուոր՝ Քէլէքի միջոցաւ՝ 40, Սէրգէյ և Նիկոլ 17. 40 (2 լիրա), յետ եկող զինուորներ 78. 30 (9 լիրա), 1 հատ ատրճանակ 25, 1 հատ ձիու վաճառումից 20, Ընդարձակ՝ Գուրգէնի ձեռամբ 23. 15, Սև Համօ՝ Թումասի հմբ. 53, Հնձւորներ գանձած նւէր 35, Յետ եկողներ 10, Սպիտակ Դոշ 16, Նորեկ գիւղ 21, Փարիզի ամսավճ. 60, Քարածորի հին և նոր ամսավճ. 84. 30, Վանանդ գիւղի ամսավճ. 18. 10, Շիկաների մի ոմն 10, Տանձոտ գիւղի մի ոմն 47. 95, նւէր Շանթի միջոցաւ 25, Գեղածոր 51. 80, Վարդածոր 33, Քար գիւղ Արամ խմբ. 10, Անտոնիկ հին և նոր ամսավճ. 59. 25, Շիկաների կոմիտէ 175, ԱՆԱՊԱՑԻ խմբերից՝ Անի 2. 30, Արագած 7, Արտաշատ 7. 50, Անթառամ 12. 50, Արծուիր 3, Արաքս 1. 70, Առանձին գիւղ 57. 35, Տիկիններ 126. 36, Առանձին տեղ 39. 30, Կայծակ 1. 55, Հրաւէրի մէջ հանգանակած 13. 65, Ենթակոմիտէի հաւաքած ապառիկներ 28. 40, Արագած 1. 60, Անթառամ 22. 60, Ս-ի և Ճ-ի նշանադրութեան առթիւ 2. 70, Ս-ի և Ճ-ի նշանադրութ. հաւաքած 10, Վաճանի ձեռամբ հաւաքած (տօնի առթիւ) 8. 50, Կայծակ 19. 75, Սլաք 38. 80, Գարեգին 33, Սլաքի ապառիկներ 2, Արաքս 34. 30, Ռշտունի 48. 50, Անի 18. 15, Խանի հանգ. գումարի մնացորդ 18. 26, Արտաշատ 23. 20, Թատրոնից 32, հանգանակած 25, Կայծակ խմբի հրաւէրում հաւաքած 13, Վազգէն 3, Անթառամից 6, Զնուտից հարսանիքում 8. 3, Անձնազոհ հրաւիրեալներից 9. 5, Անձնազոհ 3. 80, առանձին գիւղ 15. 75, Ս. և Ս-ի նշանադր. տիկիններից. 2. 2, Ռշտունի Ս. և Ս-ի հրաւէր. 7. 70, Անի հարս. հաւաքած 18. 8, Ռշտունի մի նշանադր. առթիւ 20. 25, Ռշտունի հարս. հաւաքած 16, Կայծակ 7. 65, Ես հարս. հաւաք. 9. 41, Որմիզդ գիւղ 61, Ծառաստան գիւղ 43. 40, Դիմաքսից հին պահանջ 50, Քարում վաճառած 10 ձիուց (Սէրգէյի միջոցաւ) 292, Վտակում վաճառ. 1 ձիուց (Սէրգէյի միջոցաւ) 12, Վտակում վաճառ. ևս մի ձիուց 20, Տուգանք Գուրգէնի միջոցաւ 10, Տուգանք Գուրգէնի միջոցաւ 17, Ա. Մ. Ս. գիւղ 21, Առիւծ գիւղ տուգանք 18, Նալօեան (Մրգաստանի խաչագող) 10, Յ. Ս. 10, Որմիզդ 2, Ալ ձի 8, Այ-նից տուգ. 1, Մի ոմն 2, Ղափաղլու ծայրերից 1. 60, Զախտոյ 7, Միջնորդ 14, Արամ գիւղ (Գուրգէնի ձեռամբ) 31. 40, Առուակ գիւղ 10, Քար Զոր 10, Ջրաբերդի Յոյս խմբ. 5. 83, Ճ-շի ձեռամբ 5. 80, Լիմպոպոնին (Տիգրանից) մի օսման. ոսկի 8. 70, Մի ձիու գին (ալ ձին) 20, Մի ձիու գին (Փիլիպի թայը) 29, Նախագործ գիւղ 104. 10, Տղմուտ գ.՝ Նեղուած խմբ. 8. 40, Ամպոտ գ. 29, Արծաթ 25, Թարթառ 31. 30, Կիկիրոն 36. 30, Կիլիկիա 12, Լուսաբուլի 15, Տղմուտ 104. 10, Պարտէզ 61, Կարմրակ 104. 45, Կարմրոտ 48. 29, Ջրաւէտ 69. 19, Վանք 113. 70, Արշալոյսիք 80. 41, Արմաւիր 79. 60, Ամպոտ 25. 25, Պրակ 45, Եփրատ գ. հարս. հաւաք. 23. 70, Պրակ գ. տուգանք 17, Կանկանի Խէչօյի պարտքը 11, Արամ գիւղի կլասսնեակ 40, Ծառաստանի Բազրևանդ խմբ. 10, Զախալ գիւղ 51. 44, Ջրաբերդ գ. 88. 45, Լոռիկ գ. 44, Խաչագողից տուգանք Գուրգէնի ձեռամբ 10, Պարտիզանից Տուրպախի ձեռամբ 221, Պրակ գիւղից Բ. կլասսնեակ 30. 5, Ն. Հայկունուց երդման փող 1. 30, ՇԻԿԱՀՈՂԻ խմբերից՝ Մեծ 111. 90, Ալիք 29, Հիւսն 13. 65, Պ. Ն-եանի հարս. հանգ. 20, Ղ-նի տանը հանգ. 40. 50, Ձիու վիճակախաղից 21. 20, Ներկայացումից 28. 90, Ն. Խ-նից նւէր 10, Վ. Օհ-նի տանը հանգ. 20. 50, Ի. Բ-եանի տանը հանգ. 15. 80, Բողբոջ խմբի ամսավճար 50. 50, Մանկական թատրոնից 12. 41, Զոնից մնացորդ և նւէր (Շիկահողում) 5. 80, Հալուատից (Շիկահող.) 18. 85, Շիկահողի ցերեկոյթից և երեկոյթից մնացորդը 102. 38, Եփրատ գիւղի հարս. հանգ. 28. 98, Սասիր գիւղի տուգանք 9, Շերամի ենթակոմիտէից 224. 60, Եփրատ 154. 65, Կղզի գիւղ 42. 33, Շերամ գ. հարս. հանգ. 16. 53, Շերամ գ. տուգանք 30, Զ-ր-շատի Բևեռ խմբի ամսավճ. Աղօյի ձեռամբ 20. 10 ռուբլի:

(Շարունակելի)

## ԵԿԵՂԵՑԻԻ կոմիտէն՝

Յունւարի 1-ից մինչև ապրիլի 20-ը.—

Հին կազմից ստացած 91. 50 ռուբլի, «Աւետիս»-ից 1034. 20, Վիճակախաղից 135. 39, հանգանակութիւնից 3450, հանգանակութ. «Նալբանդ»ի գիւղերում 360 ռուբլի: Գումար 5,606 ռուբլի 9 կոպէկ:

## ԺԼԱՑ կոմիտէն՝

Զարունի խումբ 50 ռուբլի, Արտաւազդ 10, Պետօ խմբ. 12. 75, Կարօ խ. 50, Բուժարան խ. 100, Ովսաննայ խ. 30, Յոյս խ. 11. 98, Օրիորդների վիճակախաղից 28. 55, Կարօ խ. 50, «Նորա-ծին»ից 250 ռուբլի: Գումար 593 ռ. 25 կոպէկ:

## ԿԱՐՄԻՐ ՋՐԻ ենթակոմիտէն՝

Արմատ խմբի ամսավճ. 26. 50, Զեփիւռ խ. 17. 22, Կոկոն խ. 53. 40, Անդրանիկ խ. 30. 75, Գոհարիկ խ. 66. 33, Արուսեակ խ. 40, Կայծակ խ. 13. 10, Արամ 5, Աղբիւր Զուլոկ 2. 50, Ուխտաւոր 7. 50, Սևեան 4, Ոմն 1, Դ. Սեր-ից 10, Գինուց 1, Իսկան 0. 80, Միքայէլ 1, Խուրշուտ 1, Յապաեան 4, Մարդ 2, Մի նշանադրութիւնից 2. 60, Մի խնջոյքում հանգանակ. 7. 50, Տիկին Վարդանուշ 5, Մի ներկայաց. 28, Զատկական տօներին հանգ. 202. 94, «Ոսկէ-Մայրի խմբակներից 205. 71 ռուբլի: Գումար 738 ռուբլի 85 կոպէկ:

---

Մեր խմբագրութեան հասցէն՝
Rédaction du „Droschak“, Genève (Suisse)